ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԵՎՐՈՍՏԱՏ

Բաժին D՝ Առանձին Շուկա, Զբաղվածության և Սոցիալական Վիճակագրություն
Մաս D-5՝ Կրթություն և **Մշակույթ**

Ուսումնական գործունեության տեսակների Դասակարգում*

Ձեռնարկ

Մայիս 2005

---

* Փաստաթղթի բնագրի անվանում է “Classification of Learning Activities”, որի բառացի թարգմանությունը (Ուսումնառության գործողությունների դասակարգում) չէր հայերենով չէր ապահովի դրա իմաստի ճշգրիտ ընկալումը և չէր համապատասխանի Հայաստանում գործող դասակարգիչների անվանումների համար ընդունված ձևին (օրինակ՝ «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ»): Այստեղ և հետագայում «Ուսումնական» բառը կապված է «Ուսումնառություն» հասկացության հետ:

Բովանդակություն

1. Նախաբան 4
2. Ներածություն 5
   2.1. ՈւԳԴ-ի կարիքը 5
   2.2. ՈւԳԴ-ի նպատակը 6
   2.3. Այս ձեռնարկի նպատակը 7
3. Ընդհանուր հասկացություններ և սահմանումներ 8
   3.1. Ցկյանս ուսումնառություն 8
   3.2. Ուսումնական գործունեության համեմատումը ոչ ուսումնական գործունեության հետ 9
   3.3. Ուսումնական միավոր գործունեություն (ՈՒՄԳ) 11
   3.4. Ուսումնառության քարտեզ և ուսումնական միավոր գործունեությունների խումբ 12
   3.5. Կրթության և ուսումնառության ոլորտը և ուսումնական գործունեության տեսակները 13
   3.6. Ուսումնական գործունեության ընդհանուր տեսակները տարբերելու գործառնական չափանիշներ 15
      3.6.1. Ինֆորմալ ուսումնառության համեմատությունը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության հետ 15
      3.6.2. Ֆորմալ կրթության համեմատումը ոչ ֆորմալ կրթության հետ 17
   3.7. Որոշումների կայացման ամփոփիչ աղյուսակ 21
4. Ուսումնական գործունեության դասակարգում (ՈւԳԴ) 22
   4.1. ՈՒԳԴ-ի բովանդակությունն ու կառուցվածքը 22
   4.2. ՈՒԳԴ-ի հիմնական վիճակագրական միավորները 22
   4.3. Ֆորմալ կրթություն 22
   4.4. Ոչ ֆորմալ կրթություն 23
   4.5. Ինֆորմալ ուսումնառություն 23
5. Ընդհանուր տեսակները, դասերը և ենթադասերը 25
   5.1. Ամփոփիչ աղյուսակ 25
   5.2. ՈՒԳԴ-ի բացատրական նոթեր 25

Հապավումների ցանկ

ՑՈՒ	Ցկյանս ուսումնառություն
ՖԿ	Ֆորմալ կրթություն
ՈՖԿ	Ոչ ֆորմալ կրթություն
ԻՖՈՒ	Ինֆորմալ ուսումնառություն
ՈւԳ	Ուսումնական գործունեություն
ՈՈւԳ	Ոչ ուսումնական գործունեություն
ՈւՄԳ	Ուսումնական միավոր գործողություն
ՈԱՇ	Որակավորումների ազգային շրջանակ
ՈւԳԴ	Ուսումնական գործունեության տեսակների դասակարգում
AES[1]	Adult Education Survey (Մեծահասակների կրթության հետազոտություն)
ETS WG	Education and Training Statistics Working Group (Կրթության և ուսուցման վիճակագրության Աշխատանքային խումբ)
HALLA	Harmonised List of Learning Activities (Ուսումնական գործունեության տեսակների ներդաշնակեցված ցանկ)
ISCED	International Standard Classification of Education (Կթության միջազգային ստանդարտ դասակարգում)
TF/MLLL	Task Force on Measuring Lifelong Learning (Ցկյանս ուսումնառության չափման Հանձնախումբ)

[1] Այս և դրան հաջորդող հապավումները միջազգայնորեն ընդունված են, և դրանց թարգմանությունը հայերեն նպատակահարմար չէ:

1. Նախաբան

Սկսած Մասաթրիխթի և Ամստերդամի համաձայնագրերից, որով կրթությունն ու ուսուցումը ներառվեցին [Եվրոպական] Համայնքի մակարդակի գործողությունների շարքում, ցկյանս ուսումնառությունը դարձավ Եվրոպական կրթության գլխավոր տարրը: Այսպիսով, ըստ Լիսաբոնի համաժողովի եզրակացության (2000) ցկյանս կրթությունը վստահելի կամուրջ է դեպի գիտակից հասարակությունը: Ավելին, Եվրամիության Խորհրդի 2002թ. հունիսի 27-ի ցկյանս ուսումնառության մասին որոշումը շեշտում է «կրթության և ուսուցման անհրաժեշտությունը սոցիալական համախմբմանը նպաստելու, ակտիվ քաղաքացիության, անձնական և մասնագիտական բավարարվածության, հարմարունակության և աշխատանքի տեղավորման հնարավորությունների բարելավման համար», և նշում, որ ցկյանս ուսումնառությունը պետք է ներգրավի նախադպրոցականից ետկենսաթոշակային տարիքները:

Ցկյանս ուսումնառությունը ոչ թե պարզապես ավանդական կրթական ծրագրի ամփոփում է, այլ ուսումնառության ժամանակակից հնարավորություն: Քանի դեռ ավանդական կրթական հաստատությունները գերազանցապես մտահոգված են գիտելիք փոխանցելով, ուսումնառության ժամանակակից հնարավորությունները և ցկյանս ուսումնառության մոտեցումը շեշտը դնում են անհատական հնարավորությունների զարգացման և սովորելու կարողության վրա: Ցկյանս ուսումնառությունն առաջարկում է ավանդական կրթական հաստատությունների գերակայությունից անցնել ավանդական և ժամանակակից ուսումնառության հնարավորությունների բազմաբովանդակ դաշտ, քանի որ վերջինս՝ մոդուլային համակարգի պես, հակված է դեպի ընթացքն ու արդյունքը: Միևնույն ժամանակ կրթության և ուսուցման պատասխանատվությունը հանրային (պետական) կազմակերպություններից տեղափոխվում է դեպի ոչ կառավարականները, ինչպես նաև՝ հենց անհատների վրա:

Այս առավելությունն ազդում է ցկյանս ուսումնառության վիճակագրության աճող պահանջի վրա: Եվրամիության սահմանումից հետևում է, որ կրթությունն ու ցկյանս ուսումնառությունը նեևառում են ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության մի ամբողջ բաժին: Ավելին, ցկյանս ուսումնառությունը պետք է ընկալվի որպես կյանքի ընթացքում կատարված բոլոր ուսումնական գործողությունների ամբողջություն, որը նպատակ ունի ավելացնելու գիտելիքները, հմտություններն ու կարողունակությունները:

Եվրոստատի կողմից հիմնված հանձնախմբի աշխատանքը, ցկյանս ուսումնառության չափելու ձևեր որոնելու գործում, տվել է որոշակի արդյունք, օրինակ՝ նման գործունեության դասակարգման հիմնում:

Դասակարգումն ու տերմինաբանությունը միմյանց բացառող, լավ սահմանված կատեգորիաներով վիճակագրական տեղեկություն կազմելու հիմնական գործիքներն են: Այս դասակարգումները կարևոր դեր են խաղում փաստերի հավաքման և վիճակագրության որակի գործում, քանի որ հնարավոր են դարձնում ներդաշնակ, բնորոշ սահմանումներ տալը:

Դասակարգումը հիմնականում արվում է տվյալների համադրում ապահովելու համար: Գոյություն ունեցող դասակարգումները վերաբերում են միայն ուսումնական գործունեության մի մասին: Հետևաբար, ֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնառությանը վերաբերող ISCED 97-ի դասակարգումները, որոնք ներառում են կրթական ծրագրեր՝ ըստ մակարդակի ու ոլորտի,

կարիք ունեն մշակվելու նախքան ինֆորմալ ուսումնառության համար օգտագործվելը: Իսկ, ահա, Լեոնարդո դա Վինչիի ծրագրի ուսումնառության պահանջների դասակարգումը (Brandsma և Kornelius) ներառում է կրթության այլ կողմեր, և ֆորմալ ու ոչ ֆորմալ ուսումնառությունը: Այս դեպքում հետաքրքիր կլիներ կազմել մի դասակարգում, որը կներառեր այս տարբեր կողմերը:

Մյուս կողմից, ինչպես բնորոշ է ոչ ֆորմալ ուսումնառությանը, միջազգային առումով ոչ մի տեղեկատվություն չկա: Ուսումնական գործունեության տեսակների[2] դասակարգման հզորացման գործում որոշ դրական փոփոխություն եղել է «Ուսումնական գործունեության տեսակների ներդաշնակեցված ցանկ» նախագծում, որն իրագործվել է CEDEFOP-ի պահանջով 2001-2002թթ. (Dieter Gnahs, Alexandra Ioannidou, Klaus Pehl, Sabine Seidel): Այս նախագծի արդյունքները կարևոր ներդրում ունեն ուսումնական գործունեության դասակարգման մեջ:

2. Ներածություն

2.1. ՈՒԳԴ-ի կարիքը

Անհատների ցկյանս ուսումնառությանը մասնակցելու վիճակագրական տեղեկության կարիքը, որն ունեն օրենսդիրները, առաջացրեց նաև համապատասխան վիճակագրական գործիքների պահանջ՝ այն չափելու համար: Ուսումնական գործունեության դասակարգումը (ՈՒԳԴ) այն գործիքն է, որը պահանջվում է ցկյանս ուսումնառության գլխավոր կետերի վիճակագրական գնահատման համար:

Եվրոստատի կողմից 2002թ. դեկտեմբերին նախաձեռնած ՈՒԳԴ-ի նախագծի շրջանակում իրականացվել է դասակարգման պոտենցիալ օգտագործողի պահանջների ուսումնասիրություն: Ուսումնասիրությունից արված գլխավոր հետևությունները կարող են ընդհանրացվել այսպես՝

- Կա պահանջ մշակել ուսումնական գործունեության գործառնական սահմանումը Եվրամիության մակարդակով:
- Չկա ուսումնական գործունեության որոշակի գործառնական սահմանում նույնիսկ ազգային մակարդակով:
- Ուսումնական գործունեության դասակարգումը երկրների մակարդակով բացակայում է:
- Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության դաշտերում կա բովաբդակային աշխատանքի պակաս:
- Կա պահանջ հաշվի առնել բոլոր ուսումնական գործունեությունը՝ ֆորմալ և ոչ ֆորմալ և (կամ) սովորեցրած կամ չսովորեցրած:
- Կա անհրաժեշտություն կատարելագործել և մանրամասնեցնել ISCED-ի կրթական ու ուսուցման դաշտերը, հատկապես՝ «անձնական զարգացում» և «աշխատանքային կյանք» առարկաները:

[2] Այսուհետև տեքստում կգործածվի «Ուսումնական գործունեության դասակարգում» արտայատությունը:

Ավելին, ՄԱԿ-ի մասնագետների խումբը, որը զբաղվում է միջազգային տնտեսագիտությամբ և սոցիալական դասակարգմամբ, կազմել է հետևյալ կարծիքը (Նյու-Յորք, 8-10 դեկտեմբերի 2003թ.)՝

«Մասնագետների խումբն առաջարկում է, որ բարձրացվի ու լուծվի ոչ ավանդական կրթության և (կամ) վերականգնողական ու ցկյանս ուսումնառության գործողությունները դասակարգման ու զեկուցման հարցը: Այդ գործին պետք է միանան UNESCO-ի վիճակագրության ինստիտուտը (ՅՈՒՎԻ), Եվրոստատն ու ԱՄԿ-ն:

ՅՈՒՎԻ-ն ու ԱՄԿ-ն ՈՒԳԴ-ի նախագծի սկզբից ներառված էին մշակման գործընթացի մեջ՝ ինելով դասակարգումների հարցով խմբում, որը նախագծի համար գործում էր որպես առաջնային խումբ 2002-2003թթ., Եվրոստատի Մեծահասակների ուսումնառության հանձնախմբի շրջանակներում:

2.2. ՈՒԳԴ-ի նպատակը

Համարվում է, որ ՈՒԳԴ-ն պետք է ընդգրկի ուսումնառության բոլոր տեսակի հնարավորությունները և կրթական/ուսումնառության ուղիները: Այն ի բնե պետք է լինի ունիվերսալ՝ հարմար լինի երկրներին՝ անկախ դրանց զարգացածության աստիճանից և ուսուցման ու կրթական համակարգերից:

Այն նախագծվել է որպես մի գործիք, որը կհավաքի և կներկայացնի ուսումնական գործունեության համեմատական վիճակագրություններ և ցուցանիշներ, թե՛ առանձին երկրներում, և թե՛ այդ երկրներից դուրս: Այն ընդգրկում է մտադրված և կազմակերպված ուսումնական գործունեություն տարիքային բոլոր խմբերի համար:

ՈՒԳԴ-ն պետք է օգտագործվի վիճակագրական ուսումնասիրություններում անհատների ուսումնառության մասնակցության տարբեր ոլորտներից քանակական տեղեկատվություն հավաքելու համար: ՈՒԳԴ-ն նախագծվել է, որպեսզի ծառայի Եվրամիության Մեծահասակների ուսումնառության ուսումնասիրության շրջանակին (AES): Այնուամենայնիվ, տնային տնտեսությունների ԵՄ այլ հետազոտությունները (ԱՈՒՀ[3], ԺՕՀ[4] և այլն), ինչպես նաև առանձին ուսումնասիրությունները (ՇՄՈՒՀ[5]) կարող են օգտագործել այն իրենց կարիքներին համապատասխանելու դեպքում:

ՈՒԳԴ-ն ստեղծված է հավաքելու, դասակարգելու և ներկայացնելու համար փաստեր՝

- ինրպես անհատների (ինչպիսին է մեծահասակների ուսումնառությանը վերաբերող՝ տնյաին տնտեսությունների հետազոտությունը, որը կկենտրոնանա ցկյանս ուսումնառության վրա), այնպես էլ ուսուցում իրականացնողների վերաբերյալ.
- ուսումնառության համակարգերում անհատների ընդգրկման, ինչպես նաև ուսումնառության այլ ոլորտների, ինչպես օրինակ սովորելուն հատկացված ժամանակի, ծախսված/ ներդրված գումարների վերաբերյալ:

---

[3] Աշխատուժի հետազոտություն
[4] Ժամանակի օգտագործման տհետազոտություն
[5] Շարունակական մասնագիտական ուսուցման հետազոտություն

ՈւԳԴ-ն ուսումնական գործունեության դասակարգմանը տալիս է հարմար բնորոշում՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցում: Այդ դեպքում այն ISCED 97-ի հետ համատեղ կլինի և կկազմի հիմնական գործնական խորհրդատվական փաստաթուղթ (տես՝ այս փաստաթղթի վերջին էջի մատենագրությունը):

2.3. Այս ձեռնարկի նպատակը

ՈւԳԴ-ի ձեռնարկը տալիս է սահմանումների և չափանիշների մի խումբ, որոնք նպատակ ունեն ապահովելու ՈՒԳԴ-ի միջազգային համադրելիությունը:

Ձեռնարկը նպատակ ունի հստակեցնել հիմնարար հասկացությունները՝ հիմնվելով ուսումնական գործունեության վիճակագրական տեղեկատվության վրա:

«Ուսումնական գործունեություն» սահմանումը գոյություն չունի ազգային Եվրոպական և (կամ) միջազգային մակարդակով: ՈւԳԴ նախագծի սկզբից հայտնաբերված էր նման սահմանման բացակայությունը, իսկ առանց ուսումնական գործունեության սահմանման դասակարգում չի կարող լինել:

Ձեռնարկը ունի երեք հիմնական բաժին՝

- Հասկացություններ և սահմանումներ
- Դասակարգումներ
- Գործառնական ուղեցույց

Ընդհանուր հասկացություններն ու սահմանումները ներառված են երրորդ բաժնում: Այս բաժինը պարունակում և սահմանում է հետևյալ հասկացությունները՝ ցկյանս ուսումնառություն, ուսումնական գործունեության համեմատումը ոչ ուսումնական գործունեության հետ, ինչպիսիք են՝ ֆորմալ, ոչ ֆորմալ կրթություն և ինֆորմալ ուսումնառություն: Այդ բաժնում սահմանվում է ուսումնառության այս երեք լայն կատեգորիաները տարբերելու չափանիշներ:

Չորրորդ բաժինը ներկայացնում է ուսումնական գործունեության դասակարգումը, իսկ բաժին հինգը ներառում է կայն կատեգորիաներ, դասեր և ենթադասեր, ինչպես նաև համապատասխան բացատրական նոթեր:

Գործառնական ուղեցույցը՝ հիմնվելով ՈւԳԴ-ի արդյունքների և ձեռնարկի թեսթավորման վրա, տեքստում ներկայացված է հարց ու պատասխանի միջոցով:

Եվ վերջում՝ հավելված 1-ում, կիրառումն արտահայտող որոշ դեպքեր են ներկայացված:

3. Ընդհանուր հասկացություններ և սահմանումներ

3.1. Ցկյանս ուսումնառություն

Ցկյանս ուսումնառությունը (ՑՈՒ) սահմանված է, որպես «կյանքի ընթացքում եղած ուսումնական բոլոր գործունեության ամբողջություն, որը նպատակ ունի կատարելագործել գիտելիքը, հմտություններն ու կարողունակությունները՝ անձնական, քաղաքացիական, սոցիալական և (կամ) աշխատանքային հեռանկարների համար»:

Ցկյանս ուսումնառությունը ներառում է <u>ուսումնական գործունեության</u> բոլոր տեսակները՝

<u>«նպատակային</u>, այսինքն այն գործունեությունը, որը կատարված է վարքագծի, տեղեկատվության, գիտելիքի, հասկացողության, վերաբերմունքի, արժեքների կամ հմտությունների բարելավման նպատակով,

<u>շարունակական բնույթ ունեցող,</u> այսինքն ոչ թե պատահական կամ անկանոն, այլ «շարունակականության և որոշակի տևողության տարրեր պարունակող», որոնք արտահայտում են կազմակերպվածությունը և, սկզբունքորեն՝ առանց տևողության ներքին սահմանի,

<u>անկախ ֆորմալ լինելուց կամ չլինելուց</u>. ներառում է ուսումնառության տարբեր տեսակներ, ինչպես օրինակ՝ աշկերտությունը, երկրորդ հնարավորության դպրոցները, աշխատանքի ընթացքում կամ ոդրանից դուրս կրթությունն ու ուսուցումը, ինքնակրթություն և այլն,

<u>անկախ ֆինանսավորման աղբյուրից</u>, որը ֆինանսավորվում է մասնավոր կամ հասարակական սեկտորների կամ անհատի կողմից,

<u>անկախ իրականացման եղանակից</u> (ավանդական կամ ժամանակակից եղանակների օգտագործում, ինչպես օրինակ՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ),

որոնք ներգրավում են ողջ բնակչությունը, անկախ տարիքից և աշխատաշուկայում զբաղեցրած դիրքից և՝

- ներառում է գրեթե գործունեություններ բոլոր տեսակները՝ սկսած վաղ մանկական կրթությունից մինչև կենսաթոշակառուների համար ժամանցային կրթությունը.
- չպետք է սահմանափակվի աշխատանքին բնորոշ արդյունքներով»:

Ցկյանս ուսումնառության սահմանումը համահունչ է ISCED-ին, քանի դեռ ISCED-ի համատեքստում ուսումնառությունը հասկացվում է որխես «վարքագծի, տեղեկատվության, գիտելիքի, հասկացության, վերաբերմունքի, արժեքի կամ հմտությունների ցանկացած բարելավում»: Սակայն, ցկյանս ուսումնառության սահմանումը կենտրոնանում է ուսումնառության գործընթացի վրա, այնինչ ISCED-ը սահմանում է այն որպես <u>ակնկալվող արդյունք:</u>

3.2. Ուսումնական գործունեության համեմատումը ոչ ուսումնական գործունեության հետ

Ուսումնական գործունեությունը սահմանված է, որպես «անհատի ցանկացած գործողություններ, որոնք կազմակերպված են նրա գիտելիքը, հմտություններն ու կարողունակությունը կատարելագործելու համար»

Ուսումնական գործունեությունը ոչ ուսումնականից տարբերելու համար գոյություն ունի երկու հիմնարար չափանիշ՝

- գործունեությունը պետք է լինի մտադրված (հակառակ պատահական ուսումնառությանը), որպեսզի գործողությունն ունենա կանխորոշված պատճառ,
- գործունեությունը պետք է որևէ ձևով կազմակերպված լինի, ներառյալ անձամբ սովորողի կողմից կազմակերպված լինելը. դա սովորաբար ներառում է ավելի լայն իմաստով տեղեկատվության փոխանցում (հաղորդագրություններ, գաղափարներ, գիտելիք, ռազմավարություններ):

Մտադրված ուսումնառությունը սահմանված է որպես «տևական արժեք ունեցող գիտելիքի, հմտությունների, կարողունակությունների կամ վերաբերմունքի նպատակաուղղված որոնում»: Սովորելու *մտադրությունը,* որը ձևավորվել է սովորողի կամ ցանկացած այլ անհատի մոտ նախքան գործողությունը սկսելը, որոշիչ չափանիշ է:

Ուսանելու մտադրությունն է, որ տարբերակում է ուսումնական գործունեությունը ոչ ուսումնականից: Իհարկե կան մի շարք գործունեություններ, որոնց գլխավոր նպատակը ուսումնառությունը չէ, սակայն դրանք էլ կարող են ուսումնառություն իրականացնել: Օրինակ՝ մեկը, մասնակցելով մարզական մրցման, կարող է կատարելագործել իր կատարողականությունը, չնայած որ այդ մտադրությունը կարող է ձևավորված չլինի: Այս դեպքը պետք է համարվի ոչ ուսումնական գործունեություն, քանի որ, չնայած սովորելուն, դա պարզապես գործունեության կողմնակի արդյունք է:

Այլ կերպ ասած, ոչ ուսումնական գործունեությունը կարող է տալ նույն արդյունքը, ինչ ուսումնական գործունեությունը: Պատահական ուսումնառությունը կարող է առաջանալ որպես ոչ ուսումնական գործունեության կողմնակի արդյունք «վարքագծի, տեղեկատվության, գիտելիքի, հասկացողության, վերաբերմունքի, արժեքների կամ հմտությունների կատարելագործման» տեսանկյունից՝ կապված «աշխատանքային, սոցիալական և անձնական արդյունքի» հետ:

Ուսումնական և ոչ ուսումնական գործունեությունները երբեմն դժվար է սահմանազատել: Մշակույթը, սպորտը կամ կրոնը ներառում են գործունեություններ, որոնք կարող են համարվել կամ չհամարվել ուսումնական գործունեություն՝ կախված նրանից, թե առկա է արդյոք սովորելու մտադրություն առանձին վերցրած դեպքում: Սա հատկապես վերաբերում է սակավ կազմակերպված գործողություններին, ինչպես, օրինակ, ինքնակրթությունն է: Ուսումնառելու համար ստեղծված ավելի կազմակերպված գործողություններում, մասնակցի սովորելու ցանկությունը կամ ջանքը չի փոխի գործունեության էությունը, դարձնելով այն «ոչ ուսումնական»: Սահմանագծերը բացատրող օրինակները ներկայացված են Հավելված 1-ում:

Հարց և պատասխան	***Որո՞նք են տեղեկություններ ստանալու և սովորելու միջև սահմանները:*** *Այս սահմանագիծը մասնավորապես տարվում է ուսումնական և ոչ ուսումնական գործունեության միջև: Այս փաստաթղթի մեկ այլ հատվածում նշված էր, որ «ոչ ֆորմալ ուսումնառության ժամանակ գիտելիքը հասանելի է դարձված, և անհատն է որոշում՝ օգտագործել այն ուսանելու համար, թե ոչ: Այսպիսով, «սովորելու մտադրությունն է», որ հաշվի է առնվում:» Հետևաբար, այս դեպքում որոշումը տեղեկություն ստացող անհատի գործն է:*
Հարց և պատասխան	***Կա՞ արդյոք գործողության տևողություն որևէ սահման, որի առկայությունը այդ գործողությունը կհամարի ուսումնական:*** *Տեսականորեն տևողության ներքին սահման անհրաժեշտ չէ: Սակայն գործնականում՝ սահմանային ուսումնասիրության մեջ, ամբողջովին կօգտագործվի նման սկզբնաժամկետ, իսկ մեծացնելով ցանկացած սահման, ասենք չորս ժամով, համադրելիությունը շատ չի մեծանա, քանի որ պատասխանողի կողմից տևողության արտահայտումը բավականաչափ ճշգրիտ չի համարվում ոչ ֆորմալ ուսումնառության համար:*

Կազմակերպված ուսումնառությունը սահմանվում է, որպես «պլանավորված որոշակի տեսքով կամ հերթականությամբ՝ ակնհայտ կամ ոչ ակնհայտ նպատակներով: Այն ներառում է իրականացնող կողմը (մարդ, մարդիկ կամ մարմին), որն ապահովում է ուսումնական միջավայր և դասավանդման մեթոդ, որի միջոցով կազմակերպվում է հաղորդակցությունը: Մեթոդը սովորաբար գիտելիք և հմտություն ձևավորող կամ հաղորդող անձն է, որը նպատակ ունի հանգեցնել սովորելուն, սակայն դա կարող է նաև անուղղակի/անշունչ լինել, օրինակ՝ համակարգչային ծրագիր, ֆիլմ կամ երիզ և այլն»:

Այս սահմանումից երևում է, որ «կազմակերպված» հասկացությունը ցանկացած ուսումնական գործունեության բնութագիրն է, քանի որ առարկան սովորելու մտադրությամբ գործունեություն կազմակերպելու որոշումը այն գլխավոր չափանիշն է, որից ելնելով կարելի է համարել, որ կա սովորելու մտադրություն: Որոշ գործունեություններ կազմակերպվածության բարձր աստիճան կարող են ունենալ, օրինակ՝ դպրոց հաճախելը: ՈՒԳ համարվող այլ գործողություններ էլ կարող են կազմակերպվածության շատ ցածր աստիճան ունենալ, օրինակ՝ ձեռնարկի միջոցով ինքնուրույն, նոր համակարգչային ծրագիր սովորելը: Այս տեսանկյունից, ցանկացած նպատակային գործողություն կազմակերպվածության որոշակի աստիճան ունի:

Կազմակերպվածության սահմանումը վերաբերվում է որոշմանը, որն ընդունվել է սովորելու հետ կապված տարբեր ոլորտների վերաբերյալ (բովանդակություն, գիտելիքի, մեթոդների, ժամանակի, նպատակի, միջավայրի կազմավորում և այլն), և ծրագրվում է նախքան գործունեությունը սկսելը: Սա վերաբերում է կամ կազմակերպության կամ մարմնի *դերին*, որը կազմակերպում, ֆինանսավորում և (կամ) իրականացնում է ուսումնառության

գործընթացը, կամ էլ ուսումնառության պլանավորմանը՝ բովանդակության, մեթոդների կամ ժամանակի որոշման տեսանկյունից:

3.3. Ուսումնական միավոր գործունեություն (ՈՒՄԳ)

Ուսուցման գործունեությունները բաղկացած են մեկ կամ ավելի Ուսուցման Առանձին Գործունեությանց: Այսպիսով, ուսումնառության միավոր գործունեությունը ՈՒԳԴ-ի հիմնական տեսական բաղկացուցիչ մասն է, որի միջոցով բոլոր ուսումնական գործունեությունները կարող են բացահայտվել ու նկարագրվել:

Ուսուցման միավոր գործունեություն սահմանված է որպես «մեթոդի և առարկայի միասնությամբ արտահայտվող»:

Դա նշանակում է, որ ամեն անգամ, երբ սովորելու մեթոդի կամ առարկայի փոփոխութուն է տեղի ունենում, ուսումնական գործողությունն էլ է փոխվում: Պատկեր 1-ը ցուցադրում է դա:



Պատկեր 1. Ուսումնական միավոր գործունեություններ

Առարկան (կամ ոլորտը) **այն է, ինչ** անհատը սովորում է: Պետք է հաստատվեն ISCED-ի կրթության ոլորտները և Եվրոստատի «Կրթության և ուսուցման ոլորտները» ձեռնարկը: Ինչևէ, ցկյանս ուսումնառության դասակարգման համապատասխանությունը բարելավելու նպատակով անհրաժեշտ է դեռևս կատարել որոշակի աշխատանք ոլորտները մանրամասնելու ուղղությամբ՝ հատկապես անձնական զարգացում և աշխատանքային կյանք առարկաների հարցում:

Մեթոդը կազմակերպական համակարգն է, որն օգտագործվում է սովորելու կամ սովորեցնելու համար (այսինքն ստանալ կամ փոխանցել գաղափարներ, տեղեկատվություն, գիտելիք, հմտություններ և կարողունակություններ): Դա կարող է հանդես գալ (կրթական) ծրագրերի, դասընթացների, միջոցառումների և ուրիշ՝ ավել կամ պակաս կազմակերպված տեսքով:

Մեթոդը՝ այսինքն կազմակերպական համակարգը, հիմնականում համընկնում է մեթոդի առօրյա հասկացության հետ, որն օգտագործվում է սովորելու տարբեր մակարդակների համար (օրինակ՝ դասարանում տրվող հրահանգներ, մասնավոր պարապմունքներ,

ինքնակրթություն): Յուրաքանչյուր ՈՒՄԳ-ի շրջանակներում կարող են օգտագործվել ուսումնառության տարբեր միջոցներ և գործիքներ: Միջոցների կամ գործիքների փոփոխությունը չի նշանակում ՈՒՄԳ-ի փոփոխություն: Դա նշանակում է, որ եթե, օրինակ, դասարանում մատուցվող դասը, որպես ուսուցչի մանկավարժական մոտեցման մաս, ներառում է բանավոր բացատրություն, դասարանում գրքերի և ինտերնետի օգտագործում, ապա գործունեությունը պետք է համարվի մեկ ՈՒՄԳ:

3.4. Ուսումնառության քարտեզ և ուսումնական միավոր գործունեությունների խումբ

Պատկեր 1-ում ներկայացված բոլոր ուսումնական գործունեությունները, որոնք կատարվել են անձի կողմից, ձևավորում են անձի «ուսումնական գործունեության քարտեզը»: Այն ներկայացնում է անձի կողմից օգտագործված բոլոր մեթոդներն ու սովորած բոլոր առարկաները, և գրաֆիկորեն պատկերում է այդ ամենը: Ինչևէ, գործնականում ուսումնառության որոշ միավոր գործունեություններ կարող են խմբավորվել: Առարկա (ուսումնասիրման ոլորտ) սովորելուն ուղղված ՈՒՄԳ-ի շարքը կոչվում է **Դասընթաց**: Դասընթացը սահմանվում է որպես «Ուսումնառության միավոր գործունեության պլանավորված շարք, որոնք ներառում են առարկաների կոնկրետ խումբ՝ առաջարկված իրականացնողի կողմից»: Պատկեր 2-ում, այնմասը, ուր S3 առարկան սովորելու համար օգտագործվում են այլ մեթոդներ, շրջանագծված է կապույտով՝



Պատկեր 2. Դասընթացը հիմնականում ՈՒՄԳ-ի խմբավորումն է՝ ըստ առարկաների

Խմբավորման մեկ այլ տեսակ է, երբ մի քանի ՈՒՄԳ-ներ կազմակերպված են որպես մի համախումբ՝ ուր տարբեր առարկաներ սովորելու համար կիառվում են տարբեր մեթոդներ: Դա կոչվում է **ծրագիր**: Ծրագիրը սահմանված է որպես *«կրթական գործողությունների համախումբ կամ հաջորդականություն, որոնք կազմակերպված են նախապես սահմանված նպատակին հասնելու կամ որոշակի կրթական խնդիրներ լուծելու համար»*: Ծրագիրը սովորաբար ներառում է մի քանի դասընթացներ, բայց միևնույն ժամանակ՝ միավոր ՈՒՄԳ-եր, ինչպես օրինակ՝ գործունեություններ, որտեղ օգտագործվում են ուսումնառության որոշակի մեթոդներ որոշակի առարկաներ սովորելու համար, որոնք ցանկացած տեսակի մեկ այլ ծրագրի կամ դասընթացի մաս չեն: Պատկեր 3-ում ծրագիրը ներկայացված է կարմիրով:



Պատկեր 3. Ծրագիրը կարող է լինել դասընթացների և ՈՒՄԳ-երի խմբավորում

Ծանոթագրություն՝ ՈՒՄԳ ուսումնառության քարտեզ հասկացությունները պարզաբանելու համար վերևում օգտագործված «ծրագիր» և «դասընթաց» եզրույթները առօրյա լեզվում կարող են օգտագործվել այլ իմաստով՝ կախված համատեքստից: Կարող են նույնիսկ «իջեցվել»՝ համարվելով «մեկ մեթոդի օգտագործում» (օրինակ՝ դասարանային առաջադրանքներ) մեկ առարկա (պատմություն) սովորելու համար, ինչը ՈՒՄԳ է՝ ելնելով վերը ներկայացված սահմանումից: Հետևաբար «ծրագիր» կամ «դասընթաց» եզրույթների առկայությունը գործունեության նկարագրման մեջ, չպետք է ինքնըստինքյան ընդունվի վերը նշված տեսական բացատրությանը հաապատասխանող:

3.5. Կրթության և ուսումնառության ոլորտը և ուսումնական գործունեության տեսակները

Կրթությունը և ուսուցումը կարող են բաժանվել լայն կատեգորիաների՝ ֆորմալ կրթություն[6] (ՖԿ), ոչ ֆորմալ կրթություն[7] (ՈՖԿ), ինֆորմալ ուսումնառություն (ԻՖՈՒ) և պատահական/չմտադրված ուսումնառություն: Այս կառուցվածքը ներկայացված է Պատկեր 4-ում :

[6] Կրթություն և ուսուցում
[7] Կրթություն և ուսուցում



Պատկեր 4. Կրթության և ուսումնառության շրջանակ

Ուսումնական գործունեության դասակարգման համար տրվող սահմանումից ելնելով՝ պատահական ուսումնառությունը ներառված չէ վիճակագրական ուսումնասիրության մեջ, քանի որ այն մտադրված չէ: ՈՒԳԴ-ի ոլորտը Պատկեր 4-ում ներկայացվում է հաստ կարմիր գծով:

ՈՒԳԴ-ի կազմակերպական հայեցակարգը հիմնված է երեք հիմնական կատեգորիաների վրա՝ Ֆորմալ կրթություն (ՖԿ), ոչ ֆորմալ կրթություն (ՈՖԿ) և ինֆորմալ ուսումնառություն (ԻՖՈՒ): Պետք է, որ հնարավոր լինի դասակարգել ուսումնական գործողության բոլոր տեսակներն այս երեք հիմնական կատեգորիաների միջոցով: Այս երեք կատեգորիաների գոյություն ունեցող բովանդակային սահմանումները հետևյալն են՝

Ֆորմալ կրթությունը «…կրթություն է, որն իրականացվում է դպրոցների, քոլեջների, համալսարանների և այլ ֆորմալ կրթության այլ հաստատությունների համակարգում: Այն սովորաբար ստացիոնար կրթություն է՝ շարունակորեն աճող «սանդուխք»-ի տեսքով, երեխաների և երիտասարդների համար, հիմնականում սկսած հինգ կամ յոթ տարեկանից մինչև քսան կամ քսանհինգ տարեկանը: Որոշ երկրներում, այս «սանդուխքի» բարձր աստիճանները մասամբ զբաղվածության և մասամբ դպրոցական կամ համալսարանական համակարգում մասնակցության համակցված ծրագրերի տեսքով են, որոնք հայտնի են դարձել, որպես «դուալ համակարգ» կամ այդ երկրներին համապատասխան այլ անվանվամբ»:

Ոչ ֆորմալ կրթությունը սահմանված է որպես «ցանկացած կազմակերպված և կայուն կրթական գործողությունների ամբողջություն, որը լիովին չի համապատասխանում ֆորմալ ուսումնառության վերը բերված սահմանմանը: Ոչ ֆորմալ կրթությունը, հետևաբար, կարող է լինել թե՛ կրթական հաստատությունների ներսում, և թե՛ դրանցից դուրս, և ներառել բոլոր տարիքային խմբերի մարդկանց: Կախված երկրի առանձնահատկություններից՝ այն կարող է ներառել մեծահասակների գրագիտության, դպրոց չհաճախող երեխաների հիմնական կրթության, կյանքի հմտությունների, աշխատանքային հմտությունների և ընդհանուր մշակույթի կրթական ծրագրեր: Ոչ ֆորմալ կրթության ծրագրերը պարտադիր չէ, որ հետևեն «սանդուղքի» համակարգին և կարող են այլ տևողություն ունենալ:

Ինֆորմալ ուսումնառությունը սահմանված է, որպես «…մտադրված, բայց սակավ կազմակերպված ու սակավ կառուցվածքային… և կարող է ներառել, օրինակ, ուսումնական միջոցառումներ (գործողություններ), որոնք պատահում են ընտանիքում, աշխատանքի վայրում, և ցանկացած մարդու առօրյա կյանքում, սեփական անձին ուղղվածության, ընտանիքին ուղղվածության կամ սոցիալական ուղղվածության հիմքի վրա»:

Հարց և պատասխան	***Ե՞րբ են մարզական գործունեությունները դառնում «հանգիստ» և դադարում լինել «ուսումնառություն»:*** *Ուսումնական գործունեության վրա կենտրոնանալու և պարզապես ֆիզիկական ֆիտնեսային ծրագրերը բացառելու համար, մենք ներառում ենք միայն ծրագրեր/դասընթացներ, որոնք շեշտը դնում են մասնակցության տեխնիկայի և կանոնների վրա և տալիս են հմտություններ մրցակցային (պրոֆեսիոնալ կամ սիրողական) ֆիզիկական գործունեության միջոցով:* *Այսպիսով մարզական գործունեությունները, որոնք սիստեմատիկորեն կազմակերպված չեն և չունեն մարզիչ/ուսուցիչ/հրահանգիչ, չեն համարվում ուսումնական/ուսումնական, այլ պարզապես ֆիզիկական ֆիտնեսային ծրագրեր են: Նրանք ներառված չեն նաև ոչ ֆորմալ ուսումնառության մեջ:* *Մարզիչների/հրաանիչների և (կամ) դատավորների/մրցավարների համար դասընթացները պետք է համարվեն ոչ ֆորմալ կրթություն, եթե տալիս են որակավորում/վկայական, որը թույլ է տալիս մասնակցին որոշակի գործառույթներ կատարել:*

Հաջորդ բաժինը պարունակում է գործառնական չափանիշներ՝ ուսումնական գործունեությունը երեք կատեգորիաների բաժանելու համար՝ դրանց բովանդակային սահմանումներին համապատասխան: Հաջորդիվ, «կրթություն» եզրույթն օգտագործվում է «կրթություն և ուսուցում» իմաստով:

3.6. Ուսումնական գործունեության ընդհանուր տեսակները տարբերելու գործառնական չափանիշներ

*3.6.1. **Ինֆորմալ ուսումնառության** համեմատությունը ֆորմալ և ոչ ֆորմալ **կրթության** հետ*

Գոյություն ունի մեկ, հիմնարար չափանիշ՝ տարբերելու համար ինֆորմալ ուսումնառությունը կրթությունից (ֆորմալ և ոչ ֆորմալ): Այն է՝ արդյոք ուսումնական գործունեությունը ինստիտուցիոնալացված է, թե ոչ:

Ինստիտուցիոնալացված ուսումնական գործունեություն ասելով՝ հասկանում ենք, որ *«կա կազմակերպություն, որը կատարում է կառուցվածքային նախապատրաստումներ (որը պետք է ներառի ուսանող-ուսուցիչ հարաբերությունները), նախագծված հատկապես կրթության և ուսումնառության համար»:*

Ինստիտուցիոնալացված ուսումնական գործունեությունները տեղի են ունենում, երբ առկա է իրականացնող տրամադրող գործակալությունը/մարմին, որը պատասխանատու է առնվազն հետևյալի համար՝

- դասավանդման/ուսումնառության մեթոդ (նախապես որոշված),
- ուսումնառության ժամանակի պլանավորում,
- ընդունելության պահանջներ,
- ուսումնառության/դասավանդման զետեղարանի վայրը:

Ինֆորմալ ուսումնական գործունեությունը **ինստիտուցիոնալացված չէ**:

Դրանք սակավ կառուցվածքային են և կարող են տեղու ունենալ գրեթե ամենուր՝ ընտանիքում, ընկերների հետ, աշխատանքի վայրում և նույնիսկ՝ օգտագործելով կրթություն և ուսուցում իրականացնողների կողմից տրամադրված զետեղարանները:

Հարց և պատասխան	***Եթե գործատուն ունի ուսումնական կենտրոն, որտեղից աշխատողները կարող են վերցնել ինքնուսույց նյութեր (էլեկտրոնային կամ թղթային ֆորմատով) և օգտագործել դրանք կամ տարածքում, կամ էլ՝ տանելով տուն, ապա դա ի՞նչ է::*** *Ոսումական կենտրոնը գիտելիիք ենթակառուցվածք է ուսումնառության համար, այլ ոչ ինստիտոցիոնալացված ուսումնական գործունեություններ: Սա նշանակում է, որ «գիտելիքը» ինստիտուցիոնալացված է (ինչպես կլիներ ցանկացած ուսումնական կենտրոնի դեպքում, որը տրամադրվում է պետության, համայնքի կամ որևէ միաության կողմից), բայց ոչ ուսումնական գործունեությունը, քանի որ այն ինքնակրթական է և, հետևաբար՝ ինֆորմալ:*

Հարց և պատասխան	***Արդյո՞ք մասնավոր դասեր տվող ուսուցիչը «ինստիտուտ» է, ինչը նշանակում է, որ մասնավոր պարապմունքները որակավորվում են, որպես «ոչ ֆորմալ կրթություն»:*** *Մասնավոր պարապողը պետք է դիտարկվի որպես ինստիտուտ: Որքան էլ սովորողը հետաքրքրված է, միևնույն է արտաքին մարմինն է որոշում (միևնույն ժամանակ նաև իրագործում) դասավանդման բովանդակությունն ու մեթոդները:* *Մասնավոր պարապմունքները կարող են նույնսիկ «ֆորմալ կրթություն» համարվել, այն դեպքում, երբ ազգային կրթական համակարգն ճանաչում է տնային պարապմունքները, քանի որ աշակերտը կմասնակցի ինստիտուցիոնալացված գործունեությանը, որը նախագծված է ՈԱՇ-ի շրջանակներում սահմանված որակավորման հանգեցնելու համար:*

Հարց և պատասխան	***Զինվորական ծառայության ընթացքում ստացած ուսումնառությունը կարող է ներառել որոշ դասընթացներ: Ինչե՞ս պետք է դրանք որակավորվեն:*** *ՈՒԳԴ շրջանակներում այդ դասընթացները պետք է դասակարգվեն որպես ոչ ֆորմալ ուսուցում: Որոշ դեպքերում տնային տնտեսությունների հետազոտության դեպքում դրանք կարող է բացառվեն (առաջարկ պատասխանողի կողմից):*

*3.6.2. **Ֆորմալ** կրթության համեմատումը **ոչ ֆորմալ կրթության** հետ*

Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունը կրթական շրջանակի մասեր են: Գոյություն ունի մեկ հիմնարար չափանիշ, որը տարբերակում է ֆորմալ կրթությունը ոչ ֆորմալից: Այն է՝ արդյոք գործունեությունը նախագծված է, որպեսզի հաջող ավարտից հետո տանի դեպի ուսումնառության նվաճում, որը հնարավոր է «տեղավորել» Որակավորումների Ազգային Շրջանակում (ՈԱՇ):

Որակավորումների ազգային շրջանակը սահմանված է որպես «միասնական, ազգային և միջազգային մակարդակներում ընդունված կառույց[8], որի միջոցով բոլոր ուսումնական նվաճումները կարող են չափվել, հաջորդաբար կապվել միմյանց հետ, և որը սահմանում է հարաբերությունները կրթության և ուսուցման արդյունքում շնորհվող բոլոր կոչումների[9] միջև»: ՈԱՇ-ը կարող է ունենալ կարգավորող փաստաթղթի տեսք, որը սահմանում է որակավորումները և նրանց համեմատական դիրքը ուսումնակա նվաճումների հիերարխիայում, և այդ որակավորումները շնորհող մարմինները: Ինստիտուցիոնալացված ուսումնական գործունեությունը (ինչպես օրինակ՝ կրթությունն ավելի լայն առումով) ֆորմալ է, երբ դրա ավարտը հանգեցնում է ՈԱՇ-ում «տեղավորվող» ուսումնական նվաճման (որակավորում կամ կոչում):

ՈԱՇ-ը կարող է լինել մի մեխանիզմ, որը մեկը մյուսին է կապում ուսումնական նվաճումները, դրանց հաղորդակից է դարձնում լայն հասարակայնությանը և (կամ) լինել օրինակ՝ որակավորումների չափոփոշիչները սահմանող՝ մի կարգավորող գործիք: ՈԱՇ-ում որակավորման ճանաչումը կարող է որոշ դեպքերում բնութագրվել որպես *«ուսումնառության կառուցվածքային փորձի ամբողջություն ..., որի ավարտը պաշտոնապես հավաստագրվում է որևէ կոչումով կամ ճանաչման մեկ այլ ձևով»*: Այլ դեպքերում, նման շրջանակները կարող են արագացնել ու հեշտացնել նախընթաց ուսումնառության ճանաչումը՝ կրեդիտ կամ որակավորում ստանալու նպատակով:

Կարևոր է նաև նշել, որ ՈԱՇ հասկացությունը տարբերվում է «Ազգային որակավորումների շրջանակ», որը կարող է ներառել կրթական և ուսուցման միայն ազգային

---

[8] The entity can take the form of an organisation/body, or regulatory document. It stipulates the qualifications and the bodies that provide or deliver the qualification (awarding bodies) that are part of the National Framework of Qualifications.

[9] Այստեղ և հետագայում ***«կոչում»*** եզրույթն օգնատործված է լայն իմաստով և կարող է նշանակել՝ որակավորում, դիպլոմ, վկայական, աստիճան կամ անձի ուսումնառության արդյունքի պաշտոնական հավաստման որևէ այլ դրսևորում:

մարմինների կողմից շնորհված որակավորումները: ՈԱՇ-ը պետք է ներառի նաև այն որակավորումները, որոնք շնորհված են այլ երկրների համապատասխան մարմինների կողմից:

(1) ՈԱՇ-ի հասկացությունը մեկ այլ ձև է հաշվի առնելու TF/MLLL-ի հաշվետվությունում առաջարկված չափանիշը սահմանազատելով ֆորմալ կրթությունը ոչ ֆորմալից: Այս չափանիշներից է *Հիերարխիկ աստիճանավորումը:* Կառուցվածքը սահմանվում է որպես կրթական «մակարդակ»: Այն հիմնովին կապված է ուսումնառության փորձի և հնարավորությունների աստիճանի հետ, որը պարտադիր պայման է մասնակցի համար, եթե նա ցանկանում է հաջող ավարտել տվյալ ծրագիրը: Ընդհանուր առմամբ, մակարդակը կախված է ծրագրի բովանդակության բարդության աստիճանից»: Ըստ ISCED-ի սահմանման՝ ֆորմալ կրթությունը կարող է դիտարկվել որպես կրթական մի սանդուխք, որտեղ մի մակարդակի հաջող ավարտը տանում է դեպի ավելի բարձր ու բարդ մակարդակի:

(2) *Ընդունելության պահանջները* սահմանված են որպես «պահանջներ, կամ պահանջների խումբ, որոնք պետք է բավարարվեն ուսումնառությանը մուտքի իրավունք ստանալու համար»: Ֆորմալ կրթությանը բնորոշ են ընդունելության համար տարբեր պայմաններ՝ հատկապես տարիքի և նախընթա կրթական հաջողությունների վերաբերյալ: Ոչ ֆորմալ ուսումնառության համար ընդունելության պահանջներ կարող են և չլինել:

(3) *Գրանցման պահանջները* սահմանված են որպես «պահանջ կամ պահանջների խումբ, որոնք պետք է բավարարվեն, որպեսզի պաշտոնական կերպով գրանցվի ուսումնառության մեջ ընդգրկվածությունը»: Ֆորմալ կրթությանը բնորոշ են գրանցումները: Ոչ ֆորմալ կրթությունը բնութագրվում է գրանցման պահանջների բացակայությամբ:

ՈԱՇ-ը ինքը վերաբերում է «որակավորումներին», մինչդեռ այդ չափանիշները վերաբերում են ՈԱՇ-ում ներառված որոկավորումներին հանգեցնող ծրագիր առանձնահատկությունների հետ, և դրանք կարող են համարվել մեևնույն հասկացությունը ներկայացնող երկու եղանակներ, ինչպես օրինակ՝ «ֆորմալ կրթությունը» CLA-ի համար. Փաստորեն ՈԱՇ-ը օգտագործվում է ՈւԳԴ-ի համատեքստում՝ որպես միջոց ցուցադրելու, որ գործունեությունը «որակավորող է»:

ՈԱՇ-ը ներառում է և՛ կրթությունը, և՛ ուսուցումը և անկախ է այն ուղուց, որը տանում է դեպի ՈԱՇ-ում ներառված որակավորման շնորհման: Որակավորում շնորհող ազգային մարմինները հիմնականում պետական մարմիններ են, որոնք լիազորված են սահմանելու և (կամ) ճանաչելու ՈԱՇ-ում ներված որակավորման արժեքը, և հետևաբար, չեն սահմանափակվում կրթության նախարարություններով, չնայած ենթադրվում է, որ դրանք են համակարգի գլխավոր դերակատարները:

Հարց և պատասխան	***Պե՞տք է արդյոք, որ ՈԱՇ-ը արդեն գոյություն ունենա երկրում:*** *ՈԱՇ-ը հասկացություն է, որը օգտագործվում է ՈՒԳԴ-ի համար: Այն կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել նման անուն կրող այլ «կառույցներին», որոնք առկա են երկրում: Ամեն դեպքում, ենթադրվում է,որ նույնիսկ եթե չկան անօրինակ*

	կառույցներ, որոնք համապատասխանում են ՈՒԳԴ-ի համատեքստում ՈԱԾ-ի հասկացությանը, դրա տարրերը գոյություն ունեն և արդեն օգտագործվում են երկրներում, երբ խոսքը է գնում ֆորմալ կրթության և ուսուցման մասին: Այն ներառում է որակավորումներ, որոնք հիմնականում կապված են այդ որաավորումներին հանգեցնող ծրագրերի, այս ծրագրերը իրականացնող հաստատությունների և այն կազմակերպությունների հետ, որոնք շնորհում կամ ճանաչում են այդ որակավորումները:

Համաձայն ՈԱԾ-ի չափանիշի՝ ֆորմալ կրթությունը վերաբերում է ինստիտուցոնալացված ուսումնական գործունեություններին, որոնք մշակվել են ՈԱԾ-ում ներառված ուսումնական նվաճումների (որակավորում կամ կոչում) հանգեցնելու համար: Այս ամենը կարող է նաև ձևակերպվել հետևյալ կերպ՝ «ֆորմալ կրթությունը ներառում է գործոունեություններ, որոնք ՈԱԾ-ի մասն են կազմում»՝ ցույց տալով այն կապը, որը գոյություն ունի գործունեության նախագծման և դրա արդյունքում շնորհվող որակավորման միջև:

Մյուս կողմից, **ոչ ֆորմալ կրթությունը** վերաբերում է ինստիտուցիոնալացված ուսումնական գործունեությանը, որը ՈԱԾ-ի մաս չի կազմում: Այն ներառում է կառուցվածքային ծրագրեր, որոնք չեն կարող տեղակայվել ՈԱԾ-ում, քանի որ հիմնականում ուսուցում իրականացնող և (կամ) շնորհող կազմակերպությունը նույնպես ՈԱԾ-ի մաս չէ: Այսպիսով, օրինակ՝ որոշ ծրագրեր, որոնք կարող են կազմակերպվել հզոր ինստիտուցոնալ համատեքստում, կարող են ՈԱԾ-ի մաս չկազմել, եթե կրթություն և ուսուցում իականացնող և (կամ) շնորհող մարմինները ՈԱԾ-ի մաս չեն կազմում (օր.՝ մասնագիտական կազմակերպությունները, մասնավոր առևտրային ընկերությունները, ոչ կառավարական կազմակերպությունները):

Հարց և պատասխան	***Ի՞նչ կասեք ֆորմալ ուսումնառության մասին, երբ ուսուցում իրականացնողը գործատուն է: Դա ՈԱԾ-ի մա՞ս է:*** *Եթե գործատուի իրականացրած ուսուցումը ՈԱԾ-ի որակավորման հանգեցնող որևէ ծրագրի մաս է, ապա գործատուն ՈԱԾ-ի մաս է, և այդ գործունեությունը «ֆորմալ ուսուցում է», նույնիսկ եթե այն ամբողջությամբ հիմնված է աշխատանքի վրա:* *Եթե անձնավորությունը մասնակցում է ուսուցման որակավորում ստանալուց հետո, որպեսզի ճանաչված մասնագետ դառնա (իրավաբանականն ավարտածը պարապում է, որպեսզի դառնա փաստաբան, կամ բժշկականն ավարտածը, որ դառնա պաթոլոգ), ապա դա աշխատանք է, և ոչ թե ուսումնառություն:* *Եթե անձը ձեռք է բերում աշխատանքային փորձ, որը նա հետագայում կարող է որոշել վավերականացնել ՈԱԾ-ի շրջանակներում, ապա նրա գործունեությունը աշխատանք է, ոչ թե ուսումնառություն (սա տարբվում է ճանաչում ձեռք բերելուց,որը կարող է կամավորական բնույթ ունենալ):*

Այն փաստը, որ պետությունը կարող է նախընթաց աշխատանքային փորձի կամ ոչ ֆորմալ, ինֆորմալ գործունեության (ինչպես, օրինակ, ինքնակրթությունն է) ճանաչման ընթացակարգեր ներդնել, չի փոխում անձի գործունեության դասակարգման կատեգորիան: Գործունեությունը համարվում է ֆորմալ միայն այն դեպքում, երբ «ՈԱՇ-ի որակավորումը» դրա կառուցվածքային մասն է:

Հարց և պատասխան	***Եթե տվկալ որակավորումը առկա է ՈԱՇ-ում, և անհատը կարող է հասնել դրան՝ հանձնելով քննություն ինքնուրույն պարապելուց հետո, արդյո՞ք ինքնակրթությունը համարվու՞մ է ֆորմալ կրթություն:*** *ՈԱՇ-ը մի կառույց է, որը հիմնված է (արդյունքների) որակավորումների վրա: Անհատի ուսումնական գործունեությունը համարվում է «ֆորմալ» միայն այն դեպքում, երբ այն տանում է դեպի ՈԱՇ-ի որակավուրում: Սա նշանակում է, որ եթե անհատը սովորում է որևէ ծրագրով, որի հաջող ավարտից հետո A որակավորում է շնորհվում, ապա այդ անհատը մասնակցում է ֆորմալ կրթությանը կամ ուսումնառությանը:* *Եթե մեկ այլ անձ ինքնուրույն պարապում է և ունի հնարավորություն գրանցվելու ավարտական քննության համար, որպեսզի ստանա A որակավորումը, ապա նրա ուսումնական գործունեությունը ինֆորմալ է, քանի որ այն տարբերվում է քննությունից, որը կարող է հանձնվել կամավորության հիմունքով:*

Հարց և պատասխան	***Եթե անձը մասնակցում է դասընթացի (որը կարող է նաև հեռավար ուսումնառության դասընթաց լինել), որը տալիս է նրան կրեդիտներ,որոնք նա կարող է օգտագործել, օրինակ մոդուլային ծրագրի շիջոցով ամբողջական մի ծրագիրն ավարտելու ծրագիրը և ՈԱՇ-ի որակավորում ստանալու համար, արդյո՞ք նա մասնակցում է ֆորմալ կրթությանը:*** *Այո: ՈԱՇ-ի որակավորման տանող ծրագրի մաս կազմող մոդուլին մասնակցելն ու այն ավարտելը ֆորմալ կրթություն է: Այն փաստը, որ ծրագրի տեսական տևողությունը առակա ուսոցման դեպքում 3 տարի է, մինչդեռ հեռակա ուսուցման դեպքում այն կարող է տևել 6, իսկ մոդուլայն ուսուցման դեպքում ի» մասնակիցը կարող է վերցնել 15 տարի, չի փոխում գործունեության բնույթը:*

Հարց և պատասխան	***Հեռուստացույցով «լեզվի դասընթաց» դիտելը ինֆորմալ ուսումնառություն է: Ի՞նչ, եթե (դեպք Ա) կա հնարավորություն նախօրոք գրանցվել և շփում ունենալ ուսուցչի հետ հեռուստադասընթացի ընթացքում և դրա ավարտին մասնակցել քննությանը, որը տալիս է ՈԱՇ-ի որակավորում: Եվ ի՞նչ, եթե (դեպք Բ) անհատը, որը մասնակցում է ծրագրին, դրա ավարտին գրանցվում***

	է քննության համար, որպեսզի ստանա կոչում, որը համապատասխանում է ծրագրով ստացած գիտելիքին: *Ա դեպքում հեռուստացույցն օգտագործվում է ինչպես հեռավար ուսումնառության ցանկացած այլ տեսակ (ինտերնետ, նամակագրություն), և գրանցված հեռուստադիտողը, փաստորեն, գրանցված է ծրագրում, որը նախագծված է ՈԱՇ-ի որակավորում ստանալու համար: Հետևաբար, գործունեությունը պետք է ֆորմալ համարվի:* *Բ դեպքում ուսումնական գործունեությունն անջատ է որակավորման հասնելու պահանջից և, հետևաբար, այն պետք է համարվի ինֆորմալ:*

Երկրում հիմնված այլազգի ուսումնական հաստատություններում կամ երկրից դուրս գտնվող հաստատություններում հեռավար ուսումնառության դեպքում մասնակցի ստացած որակավորումը համարվում է իր երկրի որակավորում: Այս գործունեությունը պետք է ֆորմալ համարվի, եթե որակավորումը արդեն ներառված է ՈԱՇ-ում (ուղիղ ճանաչում և համարժեքություն), կամ եթե ընդհանուր առմամբ ճանաչված է ՈԱՇ-ով, սակայն լրացուցիչ «համապատասխանության» քննություններ են անհրաժեշտ, որոշելու համար արդյոք <u>ուսանողն</u> ունի գիտելիքի բավարար մակարդակ, այն է՝ համապատասխանության ճանաչում <u>անհատական հիմունքով</u>: Հակառակ դեպքում ծրագիրը ոչ ֆորմալ կրթություն է:

Հարց և պատասխան	***Եթե կա «համապատասխանության քննության» անհրաժեշտություն որևէ կոչման համար, որ այն ճանաչվի համապատասխանող լավ ճանաչված ազգային ֆորմալ կոչման, արդյո՞ք դա նշանակում է, որ այդ կոչումը ճի պատկանում ՈԱՇ-ի՞ն:*** *Կոչումը, որի կրողին թույլատրված է մասնակցել համապատասխանության քննության, սկզբունքորեն պետք է համարվի ՈԱՇ-ի պատկանող (կամ ճանաչվող): Համապատասխանությունը սովորաբար կիրառվում է հետագա կրթության կամ մասնագիտական ոլորտում անհրաժեշտ միավորներ շնորհելու համար: Հետևաբար համապատասխան ծրագիրը պետք է համարվի ֆորմալ կրթություն:*

3.7. Որոշումների կայացման ամփոփիչ աղյուսակ

Պատկեր 5-ում ներկայացված է կրթությունն ու ուսումնառությունը լայն կատեգորիաների բաժանելու գործընթացը:



Պատկեր 5. Ուսումնառության և կրթության դասակարգումը 3 լայն կատեգորիաների

4. Ուսումնական գործունեության դասակարգումը (ՈՒԳԴ)

4.1. ՈՒԳԴ-ի բովանդակությունն ու կառուցվածքը

ՈՒԳԴ-ն ուսումնական գործունեության տաքսոնոմիկ կոդավորման սխեմա է: Ուսումնական գործունեությունները ներառում են մեկ կամ ավելի ուսումնառության միավոր գործունեություններ: Դասերի և ենթադասերի անվանումներն ու նկարարությունները հիմնված են ընդհանուր բնութագրերի վրա:

4.2. ՈՒԳԴ-ի առաջնային վիճակագրական միավորները

Յուրաքանչյուր ուսումնական գործունեություն կարող է պատկանել ուսումնառության 3 լայն կատեգորիաներից միայն մեկին (ֆորմալ կրթություն, ոչ ֆորմալ կրթություն և ինֆորմալ ուսումնառություն)՝ համաձայն գերիշխող (տես բաժին 6) մեթոդի և որոշիչ չափանիշների, ինչպես ներկայացված է սույն ձեռնարկի նախորդ բաժնում:

4.3. Ֆորմալ կրթություն

Ֆորմալ կրթության համար առաջնային վիճակագրական միավորը մնում է կրթական **ծրագիրը**, ինչպես սահմանված է ISCED 97-ում:

Ֆորմալ կրթության կենտրոնական կամ հիմնական ՈՒՄԳ-ն ուսում տալն է (երես առ երես կամ հեռավորության վրա):

Ֆորմալ կրթության ուսումնական գործունեությունների դասակարգման համար կրթական ծրագրերը՝ ըստ դրանց մակարդակի (հիմնված բովանդակության վրա), բավարար են:

4.4. Ոչ ֆորմալ կրթություն

Ոչ ֆորմալ կրթության համար առաջնային վիճակագրական միավորը մեկ կամ ավելի առարկա ուսանելու ինստիտուցիոնալացված կազմակերպումն է (կազմակերպական շրջանակը):

Այդ կազմակերպում կարող է ընդունել դասընթացի, ոչ ֆորմալ կրթական ծրագրերի կամ ցանկացած այլ տեսք, երբ **կենտրոնական կամ հիմնական** ՈՒՄԳ-ն ինստիտուցիոնալացված է կամ դասավանդվում է (երես առ երես կամ հեռավորության վրա):

Ոչ ֆորմալ կրթության որոշ գործունեություններ ներառված են ISCED 97-ի կրթական ծրագրերի՝ ըստ մակարդակների դասակարգման մեջ՝ հիմնված կրթության բովանդակության վրա:

4.5. Ինֆորմալ ուսումնառություն

Ինֆորմալ ուսումնառության առաջնային վիճակագրական միավորը **մեկ առարկայի համար օգտագործված մեթոդն է:**

Ինֆորմալ ուսումնառությունը կարող է ներառել կամ չներառել «դասավանդվող ուսումնառություն», բայց այն պետք է ինստիտուցիոնալացված չլինի:

Հարց և պատասխան	***Ի՞նչ, եթե խնդրո առարկա գործունեությունը փաստացիորեն մի քանի տարբեր գործունեության ամբողջություն է:*** *ՈՒԳԴ-ն կառուցված է «Ուսումնական միավոր գործունեության» հիմքի վրա, որն ունի մեթոդի և առարկայի միավոր, որի մասրամասնեցման աստիճանը, որին համապատասպան պետք է հավաքվի և վերլուծվի տեղեկատվությունը, կախված է այն խնդրից, որը դրված է ՈՒԳԴ-ի առջև:* *Գոյություն ունի տարատեսակների անտեսանելի հիերարխիա: «Ֆորմալը» ավելի բարձր է, քան «ոչ ֆորմալը», վերջինս էլ բարձր է «ինֆորմալից»: Այն գործունեությունները, որոնք ավելի ցածր մակարդակի վրա են, բայց հանդիսանում են ավելի բարձր մակարդակի գործունեության մաս, նույնպես համարվում են բարձր մակարդակի գործունեություն: Օրինակ, օգտագործելով ինքնակրթությունը, լրացուցիչ պարապմունքները կամ ինտերնետ աղբյուրները ֆորմալ կրթության ծրագրի շրջանակներում տնային աշխատանքը կատարելու համար, կարող է համարվել ֆորմալ գործունեության մաս, եթե մեզ համար էական նշանակություն չունեն ուսանողի կողմից ֆորմալ գործունեությանը մասնակցելու համար օգտագործվող մեթոդների մանրամասները:*

	Հակառակ դրա, եթե բարձր մակարդակի գործունեությունը կազմակերպվել է ավելի ցածր մակարդակի՝ երկար տևող գործունեության շրջանակում, ապա այն համարվում է առանձին գործունեություն:

5. Լայն կատեորիաները, դասերը և ենթադասերը

5.1. Ամփոփիչ աղյուսակ

Ուսումնական գործունեության դասակարգման համար առաջարկված կատեգորիաները, դասերն ու ենթադասերն ամփոփված են հետևյալ աղյուսակում: Ծանոթագրությունները ներկայացված են բաժին 6-ում:

Կոդեր	**Լայն կատեգորիաները** / դասերը / ենթադասերը
1.	Ֆորմալ Կրթություն
2.	**Ոչ ֆորմալ Կրթություն**
2.1.	Ոչ ֆորմալ ծրագրեր
2.2.	Դասընթացներ
2.2.1.	*Դասընթացեր, որոնք անցկացվում են դասարանում՝ ներառյալ դասախոսությունները*
2.2.2.	*Համատեղված տեսական-գործնական դասընթացներ՝ ներառյալ սեմինարները*
2.2.3.	*Բաց և հեռավար ուսուցման դասընթացներ*
2.2.4.	*Մասնավոր պարապմունքներ*
2.3.	Աշխատանքի ընթացքում իրականացվող՝ ուղղորդվող դասընթացներ
2.4.	Այլ դասերում չընդգրկված
3.	**Ինֆորմալ ուսումնառություն**
3.1.	Դասավանդվող ուսուցում
3.1.1.	*պարապմունք/ ինֆորմալ դասընթացներ*
3.1.2.	*«Ուղղորդվող» այցելություններ*
3.2.	Թդասավանդվող ուսուցում
3.2.1.	*Ինքնակրթություն*
3.2.2.	*Ուսումնառող խումբ*
3.2.3.	*Պրակտիկա*
3.2.4.	*«Չուղղորդվող» այցելություններ*

5.2. ՈՒԳԴ-ի ծանոթագրություններ

1. Ֆորմալ կրթություն

Ֆորմալ կրթությունը պատկանում է <u>ինստիտուցիոնալացված</u> ուսումնական գործունեությունների շարքին, որոնք հանգեցնում են նվաճման, որը կարող է տեղ գտնել <u>ՈԱՇ</u>-

ում: ՈԱԾ-ը ճանաչում է ուսումնական գործունեությունը, եթե այն ունի մակարդակների ու գնահատականների աստիճանական բարձրացում, ընդունելության պահանջներ և ֆորմալ ընդունելություն:

Ֆորմալ կրթության տեսակների համար բացատրական նոթերը վերաբերվում են ISCED 1997-ի կրթական մակարդակներին (էջ 13-33): Հետևաբար, կարդացողները պետք է դիմեն այս հրատարակությանը ցանկացած տեղեկատվություն ստանալու համար այս լայն բաժինների բովանդակության՝ տեսակների ու տարատեսակների վերաբերյալ:

2. Ոչ ֆորմալ կրթություն

Ոչ ֆորմալ կրթությանը պատկանում է հաստատության կողմից ուսումնական գործունեությունների շարքին, որոնք ՈԱԾ-ի մաս չեն: Դրանք են այն կառուցվածքային գործունեությունները, որոնք կամ չեն տանում դեպի որևէ որակավորման, կամ էլ այդ որակավորումը ՈԱԾ-ի կողմից ճանաչված չէ: Օրինակ նախագծեր կամ դասընթացներ, որոնք ՈԱԾ-ի մաս չեն, բայց ճանաչվում են մասնագիտական կազմակերպությունների կողմից:

2.1. Ոչ ֆորմալ ծրագրեր

Կրթական կամ ուսումնական ծրագրերը, ինչպես օրինակ «կրթական գործունեության խմբեր կամ ամբողջականություն, որ կազմակերպված է նախորոշված նպատակին կամ կրթական առաջադրանքներին հասնելու համար» դասակարգված են, որպես ոչ-ֆորմալ, եթե չեն տանում ՈԱԾ-ում ներառված որակավորման:

Այն դեպքում, երբ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի բովանդակությունը համարվում է համապատասխան/հավասար ֆորմալ կրթական ծրագրերի մակարդակին, ապա ISCED-ի չափանիշն է օգտագործվում (տես UNESCO ISCED 97 փաստաթուղթը էջ 13-33):

2.2. Դասընթացներ

Դասընթացները հիմնականում կենտրոնացած են առարկայի վրա: Դրանք ուսուցվում են մեկ կամ ավելի մարդկանց կողմից, որոնք մասնագիտացած են ոլորտում(ոլորտներում): Դասընթացները կարող են անցկացվել մեկ կամ ավելի պայմաններում/վայրերում, որոնք նշված են ստորև.

2.2.1 Դասընթացներ, որոնք անցկացվում են դասարանային առաջադրանքների հիման վրա (ներառյալ լեկցիաները)

Այս ենթաբաժինը ներառում է ուսուցում, որը կազմակերպվում է դասարանում մի խումբ մարդկանց համար: Այն կառուցված է ուսուցչի/պարապողի/ղեկավարի գիտելիքի հիման վրա և կրթելու նպատակով: Այն կարող է ներառել կամ չներառել տվյալ թեմայի շուրջ քննարկում:

Ներառում է՝

աշխատանքի հետ կապված դասընթացներ, *որոնք անցկացվում են աշխատանքային ժամի ընթացքում կամ դրանից դուրս, աշխատանքի վայրում կամ դրսում, վճարովի կամ անվճար:*

Սեսսիաներ, որոնք ունեն դասընթացի տեսք և անցկացվում են դասարանային առաջադրանքների միջոցով, որոնք կարող են տրվել կոնֆերանսի կամ կոնգրեսի ընթացքում: Եթե այս սեսսիանորում կա պրակտիկ պարապմունք, ապա այն դասակարգվում է 2.2.2-ի տակ:

2.2.2 Համատեղ պրակտիկ-տեսական դասընթացներ (ներառյալ սեմինարներ)

Այս ենթաբաժին են մտնում բոլոր դասընթացները, որոնք համատեղում են լսարանային առաջադրանքներն ու պրակտիկան: Սա ներառում է մասնագիտական աշկերտությունը, որն ընդգրկված չէ <u>ֆորմալ կրթության</u> մեջ: Համատեղ պրակտիկ-տեսական դասընթացները ներառում են նաև ուսումնական գործունեություններ, որոնք ունեն որոշ դասարանային առաջադրանքներ պրակտիկայի, աշխատանքի հետ համատեղ:

Ներառում է՝

Սեսսիաներ, որոնք համատեղում են տեսական նյութերը աշխատանքի, պարապմունքի հետ, որը տրամադրվում է կոնֆերենսի կամ կոնգրեսի ժամանակ և կարող է կոչվել «սեմինար», «սեսսիա», «պարապմունք» և այլն:

2.2.3 Բաց և հեռավար ուսումնառության միջոցով դասընթացներ

Այս ենթաբաժինը ընդգրկում է դասընթացներ, որոնք նման են դեմ առ դեմ դասընթացներին, այսինքն, կարող են ունենալ ուսումնական ծրագիր, գրանցամատյան, պարապմունք և նույնիսկ թեսթեր, բայց դասընթցը տեղի է ունենում փոստի կամ էլէկտրոնային շփման միջոցով, կապելով ուսուցչին և աշակերտին, որոնք չեն գտնվում նույն դասասենյակում: Այս տիպի դասընթացներում դասավանդողի և ուսանողի շփումը անմիջապես տեղի չի ունենում, այլ մի փոքր ուշացումով:

2.2.4 Մասնավոր դասընթացներ

Սա ուսումնական լրացուցիչ դասերի «պլանավորված դասընթաց է, որ առաջարկվում է մասնագետների կողմից, գիտելիքը կամ հմտությունները խորացնելու, ավելի ինտենսիվ սովորելու համար, և սովորաբար մեկ կամ շատ քիչ սովորողների հետ է անցկացվում»: Այս դեպքում, պարապողը (ֆիզիկական անձ) նույնպես հիմնական «գիտելիք տվողն է», և կրթությունը նրա «հիմնական զբաղմունքն է»:

Հարց և պատասխան	***Ո՞րն է տարբերությունը ինստիտուցիոնալացված (2.2.5), և ոչ ինստիտուցիոնալացված մասնավոր պարապմունքների միջև (3.1.1):*** *Տարբերությունը պարապողի, և սովորողի հետ նրա հարաբերությունների մեջ է: Եթե անհատը մասնավոր դասեր տալու հիմնական զբաղմունք ունի և ունի հմուտ աշակերտ/ուսուցիչ հարաբերություն սովորողի հետ, ապա սա 2.3-է: Եթե պարապող դասատուն օգնում է սովորողին սոցիալական բարեկամության վրա հիմնվելով, ապա դա 3.1.1-է.:*

2.3. Աշխատավայրում իրականացվող ուղղորդվով ուսուցում

Այս տեսակի պարապմունքի հատկանիշն է պլանավորված դասընթացները, առաջադրանքները կամ պրակտիկ փորձը, որոնց ընթացքում օգտագործվում են աշխատանքի սովորական գործիքներ, հենց աշխատավայրում կամ գործի ընթացքում՝ պարապեցնողի ներկայությամբ: Հիմնականում դա կազմակերպվում է ղեկավարության կողմից նոր գործընկերների ադապտացիայի համար: Այն կարող է ներառել կազմակերպության մասին ընդհանուր տեղեկատվություն կամ մասնագիտանա կոնկրետ աշխատանքի մեջ:

Բացառում է՝

Ֆորմալ կրթության բոլոր տեսակները և ոչ ֆորմալ ուսումնառության մեջ ներառված համատեղ տեսական-գործնական դասընթացները:

2.4. Այլ խմբերում չընդգրկված

Այս ենթաբաժինը այն ոչ ֆորմալ ուսումնական գործունեության համար է, որոնք չեն գտնվում ցանկցացած այլ բաժնի մեջ: Այսինքն կարող են մի երկրին շատ բնորոշ գործունեություններ լինել, կամ էլ այնքան նոր, որ դեռ հայտնված չեն ցուցակներում:

3. Ինֆորմալ ուսուցում

Ինֆորմալ ուսումնական գործունեությունները <u>հաստատության</u> կողմից կազմակերպված չեն լինում: Այն ավելի քիչ կազմակերպված ուսումնական միավոր գործունեության ամբողջութուն է: Կարող է հանդիպել գրեթե ամենուր՝ ընտանիքի կազմում, ընկերների հետ, աշխատանքի վայրում:

3.1. Ուսուցանվող կրթություն

3.1.1 Մարզում/ինֆորմալ պարապմունք

Այս բաժինը ներառում է կազմակերպված, ոչ հաստատության կողմից իրականացվող ուսումնական փորձերի շատ լայն շրջանակ, որը առաջարկվում է մասնագետների կողմից: Սրանք ընտրվում են գիտելիքը խորացնելու, ավելի ինտենսիվ սովորելու համար, և անցկացվում են մեկ կամ քիչ քանակությամբ սովորողների հետ: Այստեղ նաև ներառվում են գործունեություններ, որոնք նախատեսված են աջակցելու և օգնելու անհատներին ուսումնառության այլ գործընթացներում:

Այստեղ մտնում են բոլոր ուսուցվող կրթական տեսակները, և՝ դեմ առ դեմ, և՝ հեռավար: Մարզումը կամ ինֆորմալ ուսումնառությունը կարող է լինել վճարովի:

Ներառում է՝

Աշխատակցի կողմից երես առ երես օգնություն նոր աշխատանքային գործիքն օգտագործելու համար: Տան անդամների, բարեկամների, ծանոթների, հարևանների կողմից տրվող դասեր՝ և՝ անմիջական, և՝ հեռավար: Այս դեպքում ծանոթը/բարեկամը/հարևանը կարող է նաև տվյալ ոլորտի մասնագետ լինել և տալ դասընթացներ:

3.1.2 «Ուղեկցվող» այցելություններ

Այստեղ մտնում է կազմակերպված իրադարձությունների շատ լայն մի շրջանակ, որը նախատեսված է սահմանափակ ժամանակում և տրված վայրում տեղեկատվություն փոխանցելու համար: Վայրը հանդիսանում է կապող օղակ էքսկուրսավարի և ուսանել ցանկացողի միջև: Պարզելու համար, թե արդյոք նման գործունեությունը ուսումնական է, թե ոչ, պետք է իմանալ արդյոք կա ուսանելու նախորոշված նպատակ: Սովորելու այս ցանկությունը նաև արտացոլվում է «ուղեկցողի» ընտրության հարցում (տուրիստական կամ կրթական օգնության/գիտական մասնագիտացում ունեցող էքսկուրսավար):

Ներառում է՝

Մշակութային նշանակություն ունեցող վայրեր հաճախելը (օրինակ թանգարաններ, ցուցահանդեսներ, պատմական կամ ծիսակատարական վայրեր և կառույցներ):

Գիտական կամ բնական վայրեր հաճախելը (օրինակ աստղագիտական կենտրոններ, բուսաբանական և կենդանաբանական այգիներ):

Սեփական կամ հասարակական ֆիրմաների կամ կազմակերպությունների այցելություն (օրինակ ֆերմա, ատոմային էլեկտրոկայան, Եվրոմիության հիմնարկություններ, տոնավաճառներ կամ ցուցահանդեսներ):

3.2. Չուսուցանվող կրթություն

3.2.1 Ինքնակրթություն

Ինքնակրթությունը կատարվում է միայն անհատի կողմից: Այս դեպքում կարող է օգտագործվել ցանկացած կրթական գործիք (տես՝ Հավելված 1): Կարող է կատարվել մասնավոր վայրում (տուն, մեքենա), հասարակական վայրում (գնացք, օդանավ) և աշխատանքի հետ կապված վայրերում:

Ներառում է՝

Առարկայի ուսուցում տպագիր նյութի օգտագործմամբ, օրինակ՝գիրք

Մեքենայում այլ լեզվով ձայնագրության ունկընդրում

Հեռուստացույցով փաստագրական ֆիլմի դիտում

Սիստեմատիկորեն կենդանիների ուսումնասիրություն

Ինտերնետից ուսուցանող նյութերի օգտագործում

Պարապմունքի կամ տնային հանձնարարության կատարում

3.2.2. Ուսուցանող խումբ

Այստեղ ընդգրկված է ամեն տեսակի ինֆորմալ խմբերին մասնակցությունը (համախոհների միջև, ընկերների, աշխատակիցների, ուսանողների և այլն), որոնք չեն ղեկավարվում: Կարող է տեղ գտնել սեփական (տուն), հասարակական (հյուրանոց, հանդիպման սրահներ) և աշխատանքի հետ կապված վայրերում:

Ուսուցանողների միջև շփումը կարող է լինել դեմ առ դեմ կամ հեռավար: Հեռակա շփման միջոց կարող են լինել փոստերը կամ տեխնիկական գործիքները (ինտերնետ «chat»-եր, վեբ-տեսախցիկներ, տեսակոնֆերանսներ):

Այս տեսակը ներառում է «ուսումնական պարբերաշրջաններ», որոնք սահմանված են, որպես «աշխատողների մի խումբ, որոնք կանոնավոր կերպով հավաքվում են աշխատանքի կազմակերպչական խնդիրները սովորելու նախնական նպատակով»: Կան նաև «Որակային օղակներ», որոնք սահմանված են, որպես «աշխատող խմբեր, որոնք հավաքվում են քննարկելու մի խնդիր և գտնելու դրա լուծումը»:

3.2.3 Պրակտիկա

Պրակտիկան հիմնականում ներառում է գիտելիքի, մեթոդների, կանոնների կիրառում կամ կրկնություն, որը կապված է այն առարկայի հետ, որն արդեն սովորել ես: Նպատակը մասնագիտական առարկայում սեփական աշխատանքը լավացնելն է: Կարող է տեղ գտնել սեփական, հասարակական, կամ աշխատանքի հետ կապ ունեցող վայրերում: Այն ներառում է տնային աշխատանքի կատարում ֆորմալ կամ ոչ ֆորմալ ծրագրով:

3.2.4 «Չուղեկցվող» այցելություններ

Այստեղ ընդգրկված են ցանկացած տեսակի այցելություններ, որոնք ուսանելու նախորոշված նպատակ ունեն, առանց «ուղեկցողի» միջամտության: Այս տեսակի այցելությունների ընթացքում կարող են օգտագործվել այցելուների համար տպագիր ուղեցույցներ, բրոշյուրներ կամ ձայնագրված էքսկուրսիաներ:

Հավելված 1. Դասակարգում՝ ըստ լայն կատեգորիաների. Առանձին դեպքեր

Հր	դեպքի նկարագիր	դասակարգվում է որպես՝
01	Փիթերը, որը 17 տարեկան է, սովորում է ֆրանսիական խոհանոց ուսումնական հաստատությունում: Դասընթացը տևում է 3 տարի, և տեսական նյութի՝ լսարանում իրականացվող ուսուցումը լրացվում է պրակտիկայով: Դասընթացին մասնակցելու թույլտվություն ստանալու համար նա պետք է ավարտած լիներ միջնակարգ դպրոցը: Ամեն տարի նա պետք է մասնակցի քննություններին, որպեսզի մյուս տարվա դասընթացին մասնակցելու թույլտվություն ստանա: Վերջում կազմակերպությունը տալիս է դիպլոմ, որը ճանաչվում է ՈԱԾ-ի կողմից՝ որպես ֆրանսիական խոհանոցի մասնագետի որակավորում՝ «Ֆրանսիական խոհանոցի ավագ խոհարար» անվանմամբ:	ՖԿ
02	Փիթերը, որը 30 տարեկան է, սովորում է ֆրանսիական խոհանոց մեծ ձեռնարկությունում (գործատուի մոտ): Դասընթացը տևում է 3 տարի, և տեսական նյութի՝ լսարանում իրականացվող ուսուցումը լրացվում է պրակտիկայով: Դասընթացին մասնակցելու թույլտվություն ստանալու համար նա պետք է ավարտած լիներ միջնակարգ դպրոցը: Ամեն տարի նա պետք է մասնակցի քննություններին, որպեսզի մյուս տարվա դասընթացին մասնակցելու թույլտվություն ստանա: Վերջում կազմակերպությունը տալիս է դիպլոմ, որը ճանաչվում է ՈԱԾ-ի կողմից՝ որպես ֆրանսիական խոհանոցի մասնագետի որակավորում՝ «Ֆրանսիական խոհանոցի ավագ խոհարար» անվանմամբ:	ՖԿ
03	Փիթերը, որը 30 տարեկան է, սովորում է ֆրանսիական խոհանոց ոչ պաշտոնական կրոնական կազմակերպությունում, օրինակ՝ Մունիում[10]: Դասընթացը տևում է 3 տարի, և տեսական նյութի՝ լսարանում իրականացվող ուսուցումը լրացվում է պրակտիկայով: Դասընթացին մասնակցելու թույլտվություն ստանալու համար նա պետք է ավարտած լիներ միջնակարգ դպրոցը: Ամեն տարի նա պետք է մասնակցի քննություններին, որպեսզի մյուս տարվա դասընթացին մասնակցելու թույլտվություն ստանա: Վերջում կազմակերպությունը տալիս է դիպլոմ, որը ճանաչվում է ՈԱԾ-ի կողմից՝ որպես ֆրանսիական խոհանոցի մասնագետի որակավորում՝ «Ֆրանսիական խոհանոցի ավագ խոհարար» անվանմամբ:	ՖԿ
04	Փիթերը սովորում է ֆրանսիական խոհանոց ուսումնական հաստատությունում: Դասընթացը տևում է 3 տարի, և տեսական նյութի՝ լսարանում իրականացվող ուսուցումը լրացվում է պրակտիկայով: Դասընթացին մասնակցելու թույլտվություն ստանալու համար նա պետք է ավարտած լիներ միջնակարգ դպրոցը: Ամեն տարի նա պետք է մասնակցի քննություններին, որպեսզի մյուս տարվա դասընթացին մասնակցելու թույլտվություն ստանա: Վերջում կազմակերպությունը տալիս է դիպլոմ, որը ճանաչվում է աշխատաշուկայի, բայց ոչ ՈԱԾ-ի կողմից:	ՈՖԿ
05	Փիթերը սովորում է ֆրանսիական խոհանոց մեծ ձեռնարկությունում (գործատուի մոտ): Դասընթացը տևում է 3 տարի, և տեսական նյութի՝ լսարանում իրականացվող ուսուցումը լրացվում է պրակտիկայով: Դասընթացին մասնակցելու թույլտվություն ստանալու համար նա	ՈՖԿ

[10] Աղանդավորական եկեղեցի

	պետք է ավարտած լիներ միջնակարգ դպրոցը: Ամեն տարի նա պետք է մասնակցի քննություններին, որպեսզի մյուս տարվա դասընթացին մասնակցելու թույլտվություն ստանա: Որակավորումը չի ճանաչվում ո՛չ աշխատաշուկայի, ո՛չ ՈԱՇ-ի կողմից:	
06	Փիթերը սովորում է ֆրանսիական խոհանոց ոչ պաշտոնական ընկերությունում, որը շաբաթ-կիրակի օրերին կազմակերպում է մեկ սեմինար, որտեղ տեսական նյութի՝ լսարանում իրականացվող ուսուցումը լրացվում է պրակտիկայով: Ցանկացած ոք կարող է գրանցվել դասընթացին մասնակցելու համար: Դասընթացը ավարտելուց հետո ընկերությունը տալիս է վկայագիի, որը հավաստում է դասընթացին մասնակցությունը և ավարտումը:	ՈՖԿ
07	Փիթերը սովորում է ֆրանսիական խոհանոց գործատուի մոտ, որը շաբաթ-կիրակի օրերին կազմակերպում է մեկ սեմինար, որտեղ տեսական նյութի՝ լսարանում իրականացվող ուսուցումը լրացվում է պրակտիկայով: Ցանկացած ոք կարող է գրանցվել դասընթացին մասնակցելու համար: Դասընթացն ավարտելուց հետո ընկերությունը տալիս է վկայագիի, որը հավաստում է դասընթացին մասնակցությունը և ավարտումը, որը ճանաչվում է ՈԱՇ-ի կողմից:	ՖԿ
08	Փիթերը, մի քանի ընկերների հետ միասին, սովորում է ֆրանսիական խոհանոց: Նրանցից մեկն ունի «Ֆրանսիական խոհանոցի ավագ խոհարարի» որակավորում և, լինելով այդպիսին, ուղղորդում է մյուսների տեսական և գործնական հարցերում: Խումբը հավաքվում է շաբաթը մեկ անգամ, երկու ամսվա ընթացքում: Բոլորը գնել են որոշ գրքեր և (կամ) տեսանյութեր՝ ուսուցումից հետո պահելու համար:	ԻՖՈՒ
09	Փիթերը, իրենց «Ֆրանսիական խոհանոցի ասոցացիա» անվանող և իրենք իրենց վկայականներ շնորհող մի քանի ընկերների հետ միասին, սովորում է ֆրանսիական խոհանոց: Նրանցից մեկն ունի «Ֆրանսիական խոհանոցի ավագ խոհարարի» որակավորում և լինելով այդպիսին տալիս է տեսական և պրակտիկ խորհուրդներ մյուսներին: Խումբը հավաքվում է շաբաթը մեկ անգամ, երկու ամսվա ընթացքում: Բոլորը գնել են որոշ գրքեր և/կամ տեսաերիզներ, ուսուցումից հետո պահելու համար:	ԻՖՈՒ
10	Փիթերը, մի քանի ընկերների հետ միասին, սովորում է ֆրանսիական խոհանոց,որոնք իրենց անվանել են «Ֆրանսիական խոհանոցի ասոցացիա», և իրենք իրենց շնորհում են վկայագրեր: Նրանցից մեկը ունի «Ֆրանսիական խոհանոցի ավագ խոհարար»-ի որակավորում և լինելով այդպիսին տալիս է տեսական և պրակտիկ խորհուրդներ մյուսներին: Խումբը հավաքվում է շաբաթը մեկ անգամ, երկու ամսվա ընթացքում: Բոլորը գնել են որոշ գրքեր և/կամ տեսաերիզներ, ուսուցումից հետո պահելու համար: Երկրորդ ամսվա վերջում նրանք հանձնում են քննություն, ՈԱՇ-ի որակավորում ստանալու համար:	ԻՖՈՒ
11	Փիթերը (ISCED 2 որակավորմամբ) աշխատելով առևտրային բանկում, որոշեց կատարելագործել իր ունակությունները կավագործությունում: Նա ընտրեց երեկոյան դասընթացների հաճախումը 1 տարվա ընթացքում «Երիտասարդության մշակութային ուսուցում» մշակութային կազմակերպությունում: Նա հաճախում է շաբաթը 2 անգամ, երկժամյա դասերի, իր ստեղծագործունակությունը վարժեցնելու և զարգացնելու համար: Չնայած նրան որ դասընթացը չի տալիս ոչ մի պաշտոնական ճանաչում ունեցող որակավորում, սակայն նա ավարտելուց հետո հնարավորություն կունենա մասնակցել հատուկ ցուցահանդեսի:	ՈՖԿ
12	Փիթերը (ISCED 3 որակավորմամբ) աշխատելով առևտրային բանկում, որոշեց կատարելագործել իր ունակությունները կավագործությունում: Նա ընտրեց երեկոյան դասընթացների	ՖԿ

	հաճախումը 1 տարվա ընթացքում «Երիտասարդության մշակութային ուսուցում» մշակութային կազմակերպությունում: Նա հաճախում է շաբաթը 2 անգամ, երկժամյա դասերի, իր ստեղծագործունակությունը վարժեցնելու և զարգացնելու համար: Ավարտելուց հետո նա ստանում է ISCED 2 որակավորում և դառնում է հմուտ կավագործ:	
13	Փիթերը (ISCED 3 որակավորմամբ) աշխատելով առևտրային բանկում, որոշեց կատարելագործել իր ունակությունները կավագործությունում: Նա ընտրեց երեկոյան դասընթացների հաճախումը 1 տարվա ընթացքում «Երիտասարդության մշակութային ուսուցում» մշակութային կազմակերպությունում: Նա հաճախում է շաբաթը 2 անգամ, երկժամյա դասերի, իր ստեղծագործունակությունը վարժեցնելու և զարգացնելու համար: Ավարտելուց հետո նա ստանում է ISCED 2 որակավորում: Նա շարունակում է իր աշխատանքը առևտրային բանկում:	ՖԿ
14	Փիթերը (ISCED 3 որակավորմամբ) աշխատելով առևտրային բանկում, որոշեց կատարելագործել իր ունակությունները կավագործությունում: Նա ընտրեց երեկոյան դասընթացների հաճախումը 1 տարվա ընթացքում «Երիտասարդության մշակութային ուսուցում» մշակութային կազմակերպությունում: Նա հաճախում է շաբաթը 2 անգամ, երկժամյա դասերի, իր ստեղծագործունակությունը վարժեցնելու և զարգացնելու համար: Ավարտելուց հետո նա ստանում է ISCED 4 որակավորում:	ՖԿ
15	Փիթերը թոշակառու է և զբաղվում է գիտությամբ և տեխնիկայով, որպես հոբբի: Նա որոշում է «կլիմայական փոփոխություններ» ոլորտում լավացնել իր գիտելիքները: Նա մասնակցում է ինտերնետային դասընթացների, որը ներառում է խմբի հանդիպումներ տարին չորս անգամ: Այս դասընթացը տևում է երկու տարի և տալիս է համալսարանական դիպլոմ, որը ճանաչված է ՈԱՇ-ի կողմից: Նա չի վերադառնում իր աշխատանքին:	ՖԿ
16	Փիթերը աշխատում է որպես տեխնիկ կենսաբանության լաբորատորիայում: Նա որոշում է պարապել և դառնալ ֆինանսական խորհրդատու: Նա գտնում է մի հեռավար ուսումնառության դասընթաց, որը տևում է երկու տարի, և որը իրականացնում է «Բաց համալսարանը»: Դասընթացը մոդուլային է: Դասընթացը գնահատվում է կրեդիտներով, որոնք անհատի կողմից կարող են տեղափոխվել այլ համալսարան ֆինանսական ինժեների դիպլոմ ստանալու համար:	ՖԿ
17	ISCED 4 որակավորմամբ Փիթերը աշխատում է, որպես տեխնիկ կենսաբանական լաբորատորիայում: Նա երկամյա հռավար ուսումնառության դասընթաց է գտնում, որն իրականացնում «Բաց համալսարանը» : Դասընթացը մոդուլային է: Դասընթացը գնահատվում է կրեդիտներով, որոնք անհատի կողմից կարող են տեղափոխվել այլ համալսարան ֆինանսական ինժեների դիպլոմ ստանալու համար:	ՖԿ
18	Փիթերը չունի որևէ որակավորում և աշխատում է տեքստիլ գործարանում: Նա որոշում է հանգստի ժամանակ սովորել անգլիական քաղաքակրթության մասին: Նա նյութեր է գնում իր անգլերենը լավացնելու համար և թեմայի շուրջ ընտրում մի քանի ցուցահանդեսներ և կոնֆերանսներ: Նա գտնում է մի քանի ինտերնետային կայքեր, որտեղից տեղեկատվություն է գտնում թեմայի շուրջ և սովորում այն ամեն երեկո երկու ժամ:	ԻՖՈՒ

19	Փիթերը չունի որևէ որակավորում և աշխատում է տեքստիլ գործարանում: Նա որոշում է հանգստի ժամանակ սովորել անգլիական քաղաքակրթության մասին: Նա նյութեր է գնում իր անգլերենը լավացնելու համար և թեմայի շուրջ ընտրում մի քանի ցուցահանդեսներ և կոնֆերանսներ: Նա գտնում է մի քանի ինտերնետային կայքեր, որտեղից ինֆորմացիա է գտնում թեմայի շուրջ և սովորում այն ամեն երեկո երկու ժամ: Նա հանձնում է քննություն և ստանում ISCED 2 որակավորում:	ԻՖՈՒ
20	Փիթերը արդեն ունի ISCED 3 որակավորում և աշխատում է տեքստիլ գործարանում: Նա որոշում է հանգստի ժամանակ սովորել անգլիական քաղաքակրթության մասին: Նա նյութեր է գնում իր անգլերենը լավացնելու համար և թեմայի շուրջ ընտրում մի քանի ցուցահանդեսներ և կոնֆերանսներ: Նա գտնում է մի քանի ինտերնետային կայքեր, որտեղից ինֆորմացիա է քաշում թեմայի շուրջ և սովորում այն ամեն երեկո երկու ժամ: Նա հանձնում է քննություն և ստանում ISCED 2 որակավորում:	ԻՖՈՒ
21	Փիթերը դահուկորդ չէ: Նա վճարովի դասընթացներ է անցնում լ դահուկորդ մասնագետի մոտ, որը աշխատում է “Ski like a Penguin» կազմակերպությունում: Վերջում նա ստանում է դահուկասահքի ճանաչված վկայական (ոչ ՈԱՇ-ից):	ՈՖԿ
22	Փիթերը դահուկորդ չէ: Նա վճարովի դասընթացներ է անցնում պրոֆեսիոնալ դահուկորդի մոտ, որը աշխատում է “Ski like a Penguin» կազմակերպությունում: Վերջում նա ոչ մի վկայական չի ստանում:	ՈՖԿ
23	Փիթերը դահուկորդ չէ: Նա վճարովի դասընթացներ է անցնում մասնավոր մարզիչի մոտ: Վերջում նա ոչ մի վկայական չի ստանում:	ՈՖԿ
24	Փիթերը դահուկորդ չէ: Նա վճարովի մասնավոր մարզումներ է անցնում դահուկորդի մոտ, որը յուրացնում է փողերը և չի գրանցում դրանք: Փիթերը վկայական չի ստանում:	ՈՖԿ
25	Փիթերը դահուկորդ չէ: Նա ընկերոջ մոտ անվճար մարզումներ է անցնում: Վերջում նա կարող է քննություն հանձնել և ստանալ ճանաչված վկայական, որը ՈԱՇ-ի ցանկում չկա:	ԻՖՈՒ
26	Փիթերը դահուկորդ չէ: Նա վճարում է, որպեսզի ստանա դահուկելու դասեր մի մարդուց, որը գրանցված չէ որպես դահուկասպորտի մարզիչ, այլ պարզապես մարզիչ է:	ՈՖԿ
27	Փիթերը դահուկորդ չէ: Նա վճարում է, որպեսզի ստանա դահուկելու դասեր մի մարդուց, որը գրանցված չէ որպես դահուկասպորտի մարզիչ, բայց պրոֆեսիոնալ դահուկորդ է:	ՈՖԿ
28	Փիթերը դահուկորդ չէ և ինքնուրույն է սովորում դահուկասպորտ: Վերջում նա մասնակցում է քննության և ստանում դահուկի հիմնավոր ուսումնառության ճանաչված վկայագիր, որը ՈԱՇ-ից չէ:	ԻՖՈՒ
29	Փիթերը աշխատում է խմորեղենի գործարանում և անցնում է նոր գործիքի հետ աշխատելու գործին: Նրա խորհրդատուն հինգ րոպե/մեկ ժամ/մեկ օր ժամանակ է տալիս նրան սովորելու նոր գործիքի հետ աշխատել:	ՈՖԿ
30	Փիթերը ամեն օր/շաբաթ/ամիս տանը/աշխատանքի վայրում կարդում է առևտրական «Rat catching today» ամսագիրը, որպեսզի ծանոթ լինի իր աշխատանքային ոլորտի զարգացումներին:	ԻՖՈՒ
31	Փիթերը վարսահարդար է: Նա մասնակցում է սեմինարի, որը կազմակերպվում է մասնագիտացված կազմակերպության կողմից և տևում է որոշ ժամանակ: Նա սովորում է վարսահարդարական վերջին նորությունները:	ՈՖԿ
32	Փիթերը վարսահարդար է: Նա մասնակցում է սեմինարի, որը կազմակերպվում է մասնագիտացված կազմակերպության կողմից և	ՈՖԿ

	տևում է որոշ ժամանակ: Բայց նա հարբում է գնացքում և քնում սեմինարի ընթացքում:	
33	Փիթերը վարսահարդար է: Նա մասնակցում է սեմինարի, որը կազմակերպվում է մասնագիտացված կազմակերպության կողմից և տևում է որոշ ժամանակ: Բայց նա այնքան էլ հետաքրքրված չէ: Նա գալիս է, որովհետև փոխարինում է տնօրենին:	ՈՖԿ
34	Փիթերը վարսահարդար է: Նա մասնակցում է սեմինարի, որը կազմակերպվում է պրոֆեսիոնալ կազմակերպության կողմից և տևում է որոշ ժամանակ: Բայց նա պարզում է, որ արդեն ամեն ինչ գիտի և նոր բան չի սովորում սեմինարի ընթացքում:	ՈՖԿ
35	Փիթերը ինքնուրույն աճպարարություն է սովորում:	ԻՖՈՒ
36	Փիթերը ինքնուրույն աճպարարություն է սովորում և ստանում վկայական աճպարարության ազգային հիմնադրամի կողմից:	ԻՖՈՒ
37	Փիթերը դասագրքով ինքնուրույն ռուսերեն է սովորում և քոլեջում կամ համալսարանում հանձնում քննություն: Նա ստանում է որակավորում, որը համազոր է ISCED 2-ին:	ԻՖՈՒ
38	Փիթերը ցանկանում է մեքենագրություն սովորել և աշխատանքի վայրում մասնակցում դասընթացների:	ՈՖԿ
39	Փիթերը ցանկանում է մեքենագրություն սովորել: Նրա տնօրենը տալիս է իրեն « մեքենագրության ինքնուսույց» ծրագիրը:	ԻՖՈՒ
40	Փիթերը ցանկանում է մեքենագրություն սովորել և օգտագործում է «մեքենագրության ինքնուսույց» ծրագիրը, բայց իր տնօրենին չի տեղեկացնում այդ մասին:	ԻՖՈՒ
41	Փիթերը ցանկանում է մեքենագրություն սովորել: Նրա տնօրենը խնդրում է մեքենագրության մարզիչի որակավորում ստացած նոր աշխատակցին, որպեսզի նա պարապի Փիթերի հետ:	ՈՖԿ
42	Փիթերը ցանկանում է մեքենագրություն սովորել: Նրա տնօրենը վարձում է մեքենագրության որակավորված մարզիչի Փիթերին մեքենագրություն սովորեցնելու նպատակով:	ՈՖԿ
43	Փիթերը ցանկանում է մեքենագրություն սովորել: Նա խնդրում է իր գործընկերոջը, որը որակավորված մարզիչ է, վճարովի դասեր տալ իրեն աշխատանքի վայրում: Տնօրենը այդ մասին չի տեղեկացվում:	ՈՖԿ
44	Փիթերը ցանկանում է մեքենագրություն սովորել: Նա խնդրում է իր գործընկերոջը, որը որակավորված մարզիչ է, անվճար դասեր տալ աշխատանքի վայրում: Տնօրենը այդ մասին չի տեղեկացվում:	ԻՖՈՒ
45	Փիթերը ցանկանում է իսպաներեն սովորել աշխատանքային ընդմիջումների ընթացքում: Նա անում է դա ուսումնական կենտրոնում, ինքնակրթական նյութերով, որոնք գնել է տնօրինությունը:	ԻՖՈՒ
46	Փիթերը որոշում է իսպաներեն սովորել: Նա թույլտվություն է ստանում տնօրինության կողմից գնված ինքնակրթական նյութերը տանել տուն և երեկոները իսպաներեն է սովորում դրանցով:	ԻՖՈՒ
47	Փիթերը որոշում է իսպաներեն սովորել: Նա օգտագործում է «Իսպաներեն սովորելու դասգիրք-ուղեցույցը»: Դասագիրքը կազմված էր այդ դասընթացը որպես հոբբի՝ այլ ոչ թե կոմերցիոն նպատակներով օգտագործելու համար:	ԻՖՈՒ
48	Փիթերը դիվանագետ է և նրան հանձնարարվել է իսպաներեն սովորել նախքան որպես դեսպան Պերու գալը: Նա դասագրքով սովորում է իսպաներեն աշխատանքի վայրում:	ԻՖՈՒ
49	Իսպաներեն սովորելու համար Փիթերը հաճախում է դասընթացի: Ամեն շաբաթ նա ձայնագրություն և դասագիրք է ստանում: Նա անում է հանձնարարությունը և ետ ուղարկում ուսուցչին: Որոշ ժամանակ անց նա ստանում է վկայական, որ ավարտել է տվյալ դասընթացի մակարդակը (Վկայականը չի ճանաչվում ՈԱՇ-ում):	ՈՖԿ

50	Փիթերը իսպաներեն է սովորում հետևելով հեռուստադասընթացի:	ԻՖՈՒ
51	Փիթերը մասնակցում է տեղեկատվական տեխնոլոգիաների երկօրյա սեմինարի: Տաս անձնավորություն դասախոսություն են կարդում ապագայ տեխնոլոգիաների մասին: Սեմինարից հետո ոչ մի վկայական չի տրվում:	ՈՖԿ
52	Փիթերը մասնակցում է տեղեկատվական տեխնոլոգիաների երկօրյա սեմինարի: Տաս անձնավորություն դասախոսություն են կարդում ապագայ տեխնոլոգիաների մասին: Վերջում տրվում է վկայական, որը հաստատում է սեմինարին մասնակցությունը:	ՈՖԿ
53	Փիթերը մասնակցում է տեղեկատվական տեխնոլոգիաների սեմինարի:Դրա ընթացքում հինգ դասընթացներ են անցկացվում: Բոլոր մասնակիցները ստանում են համապատասխան նյութեր և առաջադրանքներ: Այն մասնակիցները, որոնք դասընթացի ավարտին ցանկանում են վկայական ստանալ, հանձնում են մեկ ժամ տևողությամբ քննության: Հաջող հանձնումից հետո նրանք ստանում են դասընթացի հաջող ավարտման մասին սերտիֆիկատ, որը ՈԱԾ-ի մաս չէ: Մնացած մասնակիցները պարզապես ստանում են սեմինարի մասնակցության վկայական:	ՈՖԿ
54	Փիթերը առանց էքսկուրսավարի այցելում է պատմության թանգարան:	ՈՈՒԳ
55	Փիթերը պատմության թանգարան է այցելում և մի քանի այլ այցելուների հետ մասնակցում էքսկուրսավարի հետ շրջագայությանը:	ԻՖՈՒ
56	Փիթերը այցելում է պատմության թանգարան և վերցնում նախօրոք ձայնագրված էքսկուրսիա:	ԻՖՈՒ
57	Փիթերը գազանանոց է այցելում, որպեսզի իր երեխաներին սովորեցնի երկկենցաղների մասին: Նա օգտագործում է գազանանոցի կողմից տրամադրվող ուսուցանող նյութերը:	ՈՈՒԳ (սովորեցնող)
58	Փիթերը ցանկանում է երկկենցաղների մասին սովորել և գազանանոց է այցելում: Նա նախօրոք վերցրել էր «Գազանանոցի ուղեցույց»-ը և նշումներ արել: Հիմա նա գալիս է ավելի մանրամասն ուսումնասիրելու երկկենցաղներին հետևելով ուղեցույցի նշումներին:	ԻՖՈՒ
59	Փիթերը շաբաթվա վերջում իր հաճույքի համար այցելում է գազանանոց:	ՈՈՒԳ
60	Փիթերը հաճախում է ֆուտբոլային խաղերի:	ՈՈՒԳ
61	Փիթերը հաճախում է գոլֆի կանոնների դասընթացի: Կանոնները սովորելու համար դասընթացը ներառում է նաև պրակտիկա:	ՈՖԿ
62	Փիթերը սկսել է մարզիչի հետ գոլֆ խաղալ, որը տալիս է գոլֆի կանոնների և պրակտիկայի մասին էլեմենտար գիտելիքներ:	ՈՖԿ
63	Փիթերը մարզիչի հետ գոլֆ է խաղում իր հմտությունը լավացնելու համար:	ՈՈՒԳ
64	Փիթերը Բուդդիզմի տաճարում հաճախում է դասերի, որպեսզի սովորի բուդդայականություն:	ՈՖԿ
65	Փիթերը մուսուլման է և նա հաճախում է մզկիթ:	ՈՈՒԳ
66	Փիթերը քրիստոնյա է, բայց հաճախում է մզկիթ:	ՈՈՒԳ
67	Փիթերը աթեիստ է և հաճախում է մզկիթ, որովհետով կրոնական արարողությունները նրա հոբբին է:	ԻՖՈՒ
68	Փիթերը մեդիտացիա է պարապում:	ՈՈՒԳ
69	Փիթերը մասնակցում է ընկերների կազմակերպած ուսուցման խմբակին, որպեսզի լավացնի Excel ծրագրի իր համակարգչային հմտությունները: Ժամանակ առ ժամանակ խմբին միանում է հատուկ մասնագետ ավելի բարդ առարկաների, ինչպես Visual Basic -ի համար:	ԻՖՈՒ
70	Փիթերը հետազոտողների խմբի անդամ է: Իրենց ցանցը	ԻՖՈՒ

	իրավաբանական որևէ կարգավիճակ չունի: Ցանցի անդամները տարին մեկ անգամ հավաքվում են իրենց իսկ կազմակերպած «խորհրդաժողովին»: Նրանք կատարում են փորձի և գիտելիքների փոխանակում: Փիթերը մասնակցում է այդ խորհրդաժողովին:	
71	Փիթերը մասնակցում է պետության կողմից կազմակերպված «մեծահասակների գրագիտություն ծրագրին», քանի որ երիտասարդ ժամանակ նա հնարավորություն չուներ գրել-կարդալ սովորել: Այս ծրագրի ավարտին նա կստանա որակավորում, որը հավասար է ISCED-ի 1-ին մակարդակին:	ՖԿ
72	Փիթերը մասնակցում է մի ծրագրի, որը կազմակերպված է «Պայքար անգրագիտության դեմ» հիմնադրամի կողմից: Ծրագրի նպատակն է տալ մեծահասակներին գրագիտության և թվաբանության հիմնական հմտություններ: Ծրագրի ավարտին վկայական չի տրվում:	ՈՖԿ
73	Փիթերը մասնակցում է մարզումների, որոնք իր պարտադիր զինվորական ծառայության մաս են կազմում:	ՈՖԿ
74	Փիթերը հաջողությամբ հանձնեց իր վարորդական իրավունքի քննության տեսական բաժինը: Հիմա նա վարորդական դասընթացներ է անցնում իր եղբորորդու հետ, որպեսզի կարողանա հանձնել Տրանսպորտի Նախարարության կողմից կազմակերպված պրակտիկ թեսթը:	ԻՖՈՒ
75	Փիթերը հիմա սովորում է հատուկ դպրոցում (ISCED4), որպեսզի դառնա ավտոմեխանիկ: Իր դասերի ընթացքում նա օգտվում է ինտերնետից և ավելի շատ տեղեկատվություն փնտրում: Բացի այդ նա հաճախում է խորհրդաժողովի “փոխանցման համակարգերի գնահատում” տեմայով:	ՖԿ
76	Փիթերը գիրք հարատարակեղ է: Նա մասնակցում է «գրքի միջազգային ամենամյա ցուցահանդեսին», որը անցկացվում է իր քաղաքում:	ՈՈՒԳ
77	Փիթերը գիրք հրատարակող է և մասնակցում է «տպագրական տեխնիկայի միջազգային 31-րդ համաժողովին», որը կազմակերպում է «Գրքի միջազգային ամենամյա փառատոնի» կողմից իր քաղաքում: Այս կոնֆերանսի ընթացքում նա մասնակցում է դասընթացների 3D քարտեզներ ստեղծելու վերաբերյալ:	ՈՖԿ
78	Փիթերը կատարում է տնային աշխատանք իր ավագ դպրոցի կրթության ծրագրի համար:	ՖԿ
79	Փիթերը մասնակցում է Microsoft-ի կողմից կազմակերպված պարապմունքներին, որպեսզի ստանա վկայական Software Engineering մասնագիտության համար:	ՈՖԿ
80	Փիթերը մշակութային միջոցառումների կազմակերպիչ է աշխատում շուրջ տաս տարի: Հիմա նա հնարավորություն ունի գրանցվել ազգային քննության համար, որի հաջող հանձնողները ստանում են վկայական: Այն ճանաչվում է ազգային մասնագիտական կազմակերպության կողմից և թույլ է տալիս ավելի բարդ դասեր վերցնել:	ՈՈՒԳ
81	Փիթերը մշակութային միջոցառումների մենեջեր է աշխատում շուրջ տաս տարի: Հիմա նա հնարավորություն ունի գրանցվել ազգային քննության համար, որը հաջող հանձնողները ստանում են սերտիֆիկատ: Այն ճանաչվում է ազգային մասնագիտական կազմակերպության կողմից, բայց թույլ չի տալիս նրան շարունակել ավելի բարդ դասերի մասնակցել:	ՈՈՒԳ
82	Փիթերը ազատ ժամանակ մասնակցում է վիճակագրական դասընթացների, որոնք անցկացվում են համալսարանում և տևում հինգ շաբաթ և կազմակերպվում են աշխատող մարդկանց համար: Հաջող ավարտից հետո նա ստանում է կրեդիտներ, որոնք կարող են	ՖԿ

	գումարվել իր մյուս կրեդիտներին և ձեռք բերել աստիճան վիճակագրության բնագավառում:	
83	Փիթերը մասնակցում է վիճակագրական դասընթացների, որոնք անցկացվում են համալսարանում և տևում հինգ շաբաթ: Նա անում է դա իր աշխատանքային ժամերի ընթացքում, քանի որ իր տնօրենն է առաջարկել: Հաջող ավարտից հետո նա ստանում է կրեդիտներ, որոնք կարող են գումարվել իր մյուս կրեդիտներին և աստիճան շնորհել վիճակագրության բնագավառում:	ՖԿ
84	Փիթերը մասնակցում է հոգեբանության դասընթացների, որը կազմակերպվում է մեծահասակների ուսումնառության տեղական ինստիտուտի կողմից: Հաջող ավարտելու դեպքում նա կստանա վկայական, որը ճանաչված է ՈԱՇ-ի կողմից:	ՖԿ
85	Փիթերը մասնակցում է բժշկություն առարկայի հեռավար ուսումնառության դասընթացին, որը առաջարկվում է այլ երկրի համալսարանի կողմից: Ֆիզիկապես համալսարանը գտնվում է իր բնակության երկրում: Ստացվող որակավորումը հավասար է իր երկրի համալսարանական կրթությանը:	ՖԿ
86	Փիթերը մասնակցում է բժշկություն առարկայի հեռավար ուսումնառության դասընթացին, որը առաջարկվում է այլ երկրի համալսարանի կողմից, որը գտնվում է իր երկրում: Ստացվող վկայականը, ընդհանուր առմամբ, ճանաչված է ՈԱՇ-ի կողմից, սակայն Փիթերը պետք է համապատասխանության քննություն հանձնի, որպեսզի այն ճանաչվի նաև իր երկրում և ստանա հնարավորություն աշխատել որպես բժիշկ:	ՖԿ
87	Փիթերը մասնակցում է իրավաբանություն առարկայի հեռավար ուսումնառության դասընթացին, որը առաջարկվում է այլ երկրի համալսարանի կողմից: Ստացվող որակավորումը հավասար է իր երկրի համալսարանական կրթությանը:	ՖԿ
88	Փիթերը մասնակցում է իրավաբանություն առարկայի հեռավար ուսումնառության դասընթացին, որը առաջարկվում է այլ երկրի համալսարանի կողմից: Ստացվող վկայականը, ընդհանուր առմամբ, ճանաչված է ՈԱՇ-ի կողմից, սակայն Փիթերը պետք է համապատասխանության քննություն հանձնի, որպեսզի այն ճանաչվի նաև իր երկրում և ստանա հնարավորություն աշխատել որպես իրավաբան:	ՖԿ
89	Փիթերը մասնակցում է հատուկ «աշխատանքային շուկայի կրթություն» ծրագրին, որը ունի հիմնական նպատակ, այն է՝ կրթել մարդկանց այն մասնագիտություններով, որոնց պահանջը կա աշխատաշուկայում: Ստացված վկայականը ունի ավագ դպրոցի կրթության մակարդակ, բայց դա ներառված չէ ՈԱՇ -ում:	ՈՖԿ
90	Փիթերը մասնակցում է դասընթացների, որոնք օդաչուի վկայական են տալիս, որը ճանաչված է ազգային մակարդակով:	ՖԿ